

ման միջոց է ծառայում եւ, որպէս արուեստաւոր խօսքի կառուցման ձեւ, արտայայտւում է տարաբնոյթ իրացումներով ապահովելով անհրաժեշտ յուզարտայայտչականութիւնն ու զգացական ներգործութիւնը:

ՀԱՍԱՈՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԻ - Ա. Իսահակեան, *Երկերի ժողովածու*, հ.հ. 1-4, Երեւան, 1973-1975:

ԳԱԾ - Գ. Աշոտ, *Ծովաստղիկս*, Երեւան, 1982:

ԳԱԳՍ - Գ. Աշոտ, *Գուսանի սէրը*, Երեւան, 1958:

ԳՍԲԴ - Գ. Սարեան, *Բանաստեղծութիւններ եւ պոէմներ*, Երեւան, 1982:

ԵԶ - Ե. Չարեան, *Երկերի ժողովածու*, հ. 1, Երեւան, 1962:

ԵԶՊԲ - Ե. Չարեան, *Պոէմներ եւ բանաստեղծութիւններ*, Երեւան, 1984:

ԴԴՎ - Դ. Դեմիրճեան, *Վարդանանք*, Երեւան, 1954:

ՅԹԸԵ - Յովհ. Թումանեան, *Ընտիր երկեր*, Երեւան, 1978:

ՅՇ - Յովհ. Թիրազ, *Քնար Հայաստանի*, հ. 3, Երեւան, 1974:

ՅՇՅՄ - Յովհ. Թիրազ, *Յուշարձան մայրիկիս*, Երեւան, 1979:

ՀՍ - Հ. Սահեան, *Երկերի ժողովածու*, հ. 2, Երեւան, 1984:

ՀՍԴԾ - Հ. Սահեան, *Դաղձի ծաղիկ*, Երեւան, 1986:

ՀՍՍԲ - Հ. Սահեան, *Սեզա՛մ, բացուիր*, Երեւան, 1972:

ՀՍԶԵ - Հ. Սահեան, *Քարափների երգը*, Երեւան, 1968:

ՇՏ - Շիրիմ, *Տաղեր*, Երեւան, 1956:

ՊՍ - Պ. Սեւակ, *Երկերի ժողովածու*, հ. հ. 1-4, Երեւան, 1972-1974:

ՎԴԱՄ - Վ. Դաւթեան, *Անկէզ մորենի*, Երեւան, 1972:

ՎՏ - Վ. Տէրեան, *Երկերի ժողովածու*, հ. 2, Երեւան, 1961:

ՎՏԲ - Վ. Տէրեան, *Բանաստեղծութիւններ*, Երեւան, 1985:

ՅԱԿՈՒԲ ԶԱՔԱՐԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱԻԱՌԻՆ ԱՐՑԱՆՈՒ» ԱՇՆԱՏՈՒԹԻՒՆԸ

Արտակ Մաղախան

Արցախի XVIII դարի երկրորդ կէսի եւ XIX դարի սկզբների պատմութիւնն արտացոլող սկզբնաղբիւրների շարքում կարեւոր տեղ է զբաղում Երուսաղէմի միաբան Յակոբ սարկաւազ Զաքարեան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» պատմագրական երկը՝ գրուած «յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ»¹, որի ձեռագիրը պահպանւում է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում (թիւ 2734)²:

Աշխատութեան հեղինակ Յակոբ Զաքարեանի մասին քիչ բան է յայտնի: Անյայտ է նաեւ նրա ծննդեան թուականը, սակայն հեղինակը նշում է, որ իր նկարագրած դէպքերից «յոյժ սակաւուցն ի յետին ժամանակի ակնատես լեալ»³: Այստեղից կարելի է ենթադրել, որ նա ծնուել է XIX դարի 10-ական թուականներին: Մկրտիչ եպս. Աղաւունդին իր «Միաբանք եւ այցելութիւն Հայ Երուսաղէմի» գրքում նրա մասին հաղորդում է կենսագրական ժլատ տեղեկութիւններ. «Յակոբ սրկ. Պողոսեան Զաքարեանց, Շուշեցի.- միաբան. 1860ին Ս. Յակոբի վանքին, կ'ընդօրինակէ «Անտառ այլաբանութեան» գիրքը»⁴: Յիշեալ

ձեռագիրը ներկայումս պահուում է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատանը 2680 թուահամարի տակ⁵: Ձեռագիրն ընդօրինակողի, ստացողի, գրչութեան տեղի եւ ժամանակի մասին հաղորդում է հետեւեալը. «Ընդօրինակեցաւ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի նուաստ միաբան Շուշեցի Յակոբ Պողոսեան Զաքարեանց յետին սարկաւազի: Յամի Տեառն 1860, դեկ. 21, ի Սբ. Երուսաղէմ, ի կաթողիկոսութեան Բ. Մատթէոս սրբազանին եւ ի պատրիարքութեան Երուսաղէմի Տ. Յոհաննու: Ի վայելս Բագու[ե]ցի Խաչատուրեան Նաճառեանց Փիլիպպոս Վարդապետ շնորհափայլ Հօր իմոյ եւ աշխատաւոր միաբանի եւ Աստուածածին Կուսի լուսափայլ դամբարանին հաւատարիմ ծառայի եւ գլխովին տեսչի՝ մատուցանեմ եռանդազին սիրով, ակնկալեալ օժանդակութեան աղօթից եւ յիշմանց նորին սուրբ Հայրութեանն՝ այժմ եւ յաւէտ...»

Քանզի ի սկզբան ձեռնարկութեանս մերոյ ի սոյն, յերկրորդում աւուր, որ էր 22 դեկտեմբեր ամսոյ 1861 [1860] ամի Սրբոյ Աթոռոյս մերոյ այցելու եւ պատրիարք Զմիւռնեցի Յոհաննէս արքեպիսկոպոս սրբազան Հոգեւոր Հայրն մեր զմահ ճաշակեալ եղաւ ի շիրիմս սրբոց...

Աւարտ մատենիս եղել է 25 յուլիս ամսոյս 1861 ամի, ի Սբ. Երուսաղէմ, յԱթոռ Սբ. Յակոբեանց»⁶:

1 Յակոբ սրկ. Զաքարեան, *Պատմութիւն գաւառին Արցախու*, ՄՄ, ձեռ. 2734, թ. 1ա

2 Մատենադարանի ձեռագրացուցակում սոյն ձեռագիրը գերկայացուած է այսպէս. «1853 թ.: Երուսաղէմ: Գրիչ՝ հեղինակը: Թերթ՝ 32: Թուղթ: 29,8 x 19,8: Միասին: Ծղագիր: Տող՝ 33: Կազմ՝ ստուարաթուղթ: Յիշատակարան գրչի՝ 1ա, 14ա, հետագայի՝ 14ա»: (Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. 1, Երեւան, 1965, էջ 864): Աւելացնենք, որ չգրուած են ձեռագրի 14բ եւ 22ա-բ թերթերը:

3 Տե՛ս ՄՄ, ձեռ. 2734, թ. 23ա

4 Մ. եպս. Աղաւունդի, *Միաբանք եւ այցելութիւն Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1929, էջ 326

5 Տե՛ս Ն. արքեպս. Պողարեան, *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. 8, Երուսաղէմ, 1977, էջ 298-299

6 Նոյն տեղում, էջ 299

«Պատմութիւնն զաւառին Արցախոս» աշխատութեան ձեռագրում եւս կան Յակոբ Զաքարեանի մասին տեղեկութիւններ պարունակող երկու փոքրիկ ծանօթութիւններ: Դրանցից առաջինը, որ գրուած է մատիտով եւ բաւականին դժուարընթեռնելի է, հաղորդում է հետեւեալը. «Այս անձը ազնիւ եւ միանգամայն իբր հրեշտակ է եւ վարժապետ կացուցուած է պատրիարքէն քաղաքի հայ ժողովրդաց դպրատան, որ քառասնի չափ աշակերտք կան հասարակ կարդացողք եւ տասնի չափ օրիորդք, որոց ձեռքը համանգամայն գիրք չկայ եւ վարժապետք ամսական համարեայ թէ չունին, եւ տղոց ծնողքը խեղճ ու վրանին գլուխներն չկայ բաց ի գրեանց, մինչեւ անգամ հարկաւորը դուռ չունին, եւն, եւն...»

Ահա՛ այս է կառավարութիւնն Յօհաննէս պատրիարքի»⁷:

Այստեղ խօսքը Երուսաղէմի հայոց պատրիարք Յովհաննէս Մովսէսեան Զմիւռնացու (1850-1860) մասին է⁸, որը «ցոյց տուաւ մեծ շինարարական աւանդ. 1852-ին շինեց փառաւոր պատրիարքարան մը, յաջորդ տարին՝ ուխտաւորներու թաղը, 1857-ին՝ դպրոց մը Պօլսի Երուսաղէմատունը եւն. բայց ասով հանդերձ նա շատ անտնտես մարդ էր եւ իր շինութեանց պատճառաւ թշուառ դրութեան հասցուց վանքին նիւթական վիճակը, նոյն իսկ շէնքերը կը շինէր՝ վանքին ամէնէն կարեւոր կալուածները ծախելով»⁹:

Երկրորդ ծանօթութիւնը, որ արդէն գրուած է սեւ մելանով, հաղորդում է հետեւեալը. «Եւ այս սարկաւազը, 1862 ամին սկիզբները վարդապետ ձեռնադրեցաւ եւ անունը Ղեւոնդ դրուեցաւ, սսեցի Մեսրոպ պիսկոպոսի ձեռամբ, որ 2 տարիի

չափ հիւր գնացած էր սուրբ Յակոբայ վանքը՝ տեղւոյն պատրիարքը եւ եպիսկոպոսները վախճանած ըլլալուն պատճառաւ, եւ ինքը (լուսանցքում՝ Մեսրոպ պիսկոպոսը - Ա. Մ.) 1863 մարտ ամսոյ մէջ մեծի պահոց հինգերորդ շաբթուն վախճանեցաւ»¹⁰: Այստեղից էլ ահնայտ է դառնում, որ Յակոբ Զաքարեանին վարդապետ է ձեռնադրել Մեսրոպ եպս. Մարաշցին, որը «նախապէս Սոյ վանքին միաբան ըլլալով՝ կը վարէ Անտիոքի եւ ապա Այնթապի առաջնորդութիւնը. 1860ին կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին. կը վախճանի 1863 Մարտ 13ին, եւ կը թաղուի Ս. Փրկիչ»¹¹: Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի ձեռագրատանը 2697^թ թուահամարի տակ պահպանուող Յակոբ վրդ. Յովհաննիսեանի կազմած 1862 թ. «Օրագրութեան» մէջ նկարագրուած է նաեւ այդ ձեռնադրութիւնը. «Մայիս 6, կիրակի-Պատարագ ի Աբ. Յակոբ, աւագ սեղան, ժամարար եպիսկոպոսն, Երեւման Խաչ, ի ժամ գրքին ընթերցողք ելին ի բեմն եւ ձեռնադրելիք... եւ կոչեաց զանունս նոցա մի առ մի. զոր օրինակ, սարկաւազ Յարութիւն՝ Եփրեմ, իսկ Յակոբն՝ Ղեւոնդ կոչեցաւ...»¹²:

Ղեւոնդ վրդ. Ղարապաղցի անուան տակ Մ. Աղաւնունու մօտ կարդում ենք. «Միաբան 1851ին, ձեռնադրեալ 1862ին, ուսուցիչ կրօնագիտութեան ժառ. վարժարանի (1851-1865), կը հրաժարի միաբանութենէն 1865ին»¹³:

Այսպիսով, Յակոբ վարդապետ Զաքարեան Շուշեցին 1851-1865 թթ. եղել է Երուսաղէմի միաբան եւ այնտեղ 1853 թ. գրել «Պատմութիւնն զաւառին Արցախոս» պատմագրական երկը, 1860-1861 թթ. ընդօրինակել «Անտառ այլաբանութեան»

7 ՄՄ, ձեռ. 2734, ր. 14ա
8 Մ. Աղաւնունի, Գ2. աշխ., էջ 366-368
9 Լ. Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, Երեւան, 2002, էջ 437

10 ՄՄ, ձեռ. 2734, ր. 14ա
11 Մ. Աղաւնունի, Գ2. աշխ., էջ 280
12 Ն. Պողարեան, Գ2. աշխ., հտ. 8, էջ 317
13 Մ. Աղաւնունի, Գ2. աշխ., էջ 232-233

գիրքը, 1862-ին ձեռնադրուել վարդապետ, իսկ 1865-ին՝ հրաժարուել միաբանութիւնից: Այլ տեղեկութիւններ նրա մասին չգիտենք:

Յակոբ Զաքարեանի «Պատմութիւնն զաւառին Արցախոս» աշխատութիւնը առաջինը գրուել է Ա. Տէր-Գրիգորեանի ուղղորդութիւնը: «Վերջինս 1940-ական թուականներին թարգմանել է այն ուսեւրէն եւ տրամադրել Աղբբեջանի գիտութիւնների ակադեմիայի պատմութեան ինստիտուտին, որտեղ եւ պահուում է 924 թուահամարի տակ, ձեռագիր վիճակում»¹⁴: Յ. Զաքարեանի պատմութեան մէկ այլ արտագրութիւն՝ կատարուած Մատենադարանի արխիւի նախկին վարիչ Յ. Աբրահամեանի ձեռքով, գտնուում է Մատենադարանում պահուող նրա անձնական ֆոնդում¹⁵:

Հետագայում այս աշխատութեանը նուիրուած յօդուածով հանդէս է եկել Ռ. Տիտանեանը¹⁶:

Երկը սկսում է Արցախում վաչկատուն թուրքական ջիւանջիը ցեղի մի ճիւղի՝ սարջալլունների ցեղապետ Փանահ խանի հաստատման եւ Շուշիի բերդի վերականգնման ժամանակներից: Այստեղ հեղինակը պարզորոշ կերպով ներկայացնում է Փանահի խորամանկ քաղաքականութիւնը հայերի նկատմամբ, որոնց մոլորեցնելու, պառակտելու, մի մասին իր կողմը գրաւելու միտումով առերեւոյթ «բարութիւն, հանդուրժողականութիւն» է ցուցաբերել նրանց նկատմամբ, անտարակոյս հաշուի առնելով նաև Արցախի մելիքների զօրութիւնը: Սակայն, հետագայում, ինչ-

պէս նշում է հեղինակը, երբ նրան յաջողւում է Արցախում ամրապնդել իր դիրքերը, ցոյց է տալիս իր իսկական դիմագիծը:

Այս մասին յաջորդում է «Պատերազմ շահին ընդ խանին Ղարաբաղում» գլուխը¹⁷, որտեղ խօսուում է նախ Սուլէյման սարդարի գլխաւորութեամբ 1793-1794 թթ. Արցախ ներխուժած պարսկական զօրքերի պարտութեան, այնուհետեւ Իրանի շահ Աղա Մուհամմադ խանի¹⁸ Այսրկովկասեան արշաւանքների, նրա սպանութեան եւ պարսկական բանակի խուճապահար փախուստի մասին: Այստեղ հեղինակը հաւատարիմ է մնում պատմական իրականութեանը, իսկ Ատրպատականի Սուլէյման սարդարի Արցախ արշաւելու վերաբերեալ Յ. Զաքարեանի տեղեկութիւնների իսկութիւնը ոչ միայն հաստատուում է ուսու պատմաբան Պ. Բուսկովի տուեալներով¹⁹, այլեւ Սուլէյման սարդարի՝ «1793-1795 թթ. Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ վարած բանակցութիւնների ու նրա կատարած հետախուզական արշաւանքների մասին պատմագրութեանը յայտնի փաստերին, Յակոբ Շուշեցին աւելացնում է շատ նորութիւններ ու մանրամասնութիւններ, որոնց չենք հանդիպում մասնաւորապէս հայկական սկզբնաղբիւրներում»²⁰: Ապա թուրքիկ ներկայացուում է Վրաստանի միաւորումը Ռուսաստանին: Այս հատուածի վերջում հեղինակը ներկայացնում է

17 Այս գլուխը հրատարակել է Ռ. Տիտանեանը իր կազմած «Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի Աղրկովկասեան արշաւանքների մասին (1795-1797 թթ.)» գրքում, Երեւան, 1981, էջ 205-222: Մենք սոյն գլխի հրատարակուած տարբերակը համեմատել ենք ձեռագրի հետ, ուղղել ցատուած անճշտութիւնները եւ ծանօթագրել:
18 Իրանի այս շահի մասին տե՛ս Ջիւնեօպսանե Ազա-Մագոմե-Պանա Կաճարա. ՏԻԵ, 1835
19 Ս. Բուտկով, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, ч. II, ՏԻԵ, 1869, с. 326-327
20 Ռ. Տիտանեան, Գ2. աշխ.,- ԼՀԳ, 1966, թիւ 9, էջ 34

Քիւրակ-չայի պայմանագրի կնքումը, որը տեղի է ունեցել 1805 թ. մայիսի 14-ին²¹, սակայն սխալմամբ որպէս պայմանագրի կնքման վայր է նշում Թիֆլիսը:

Այնուհետեւ, առանց ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմին անդրադառնալու, Հեղինակն անցնում է ռուս-պարսկական յաջորդ պատերազմի որոշ ուշադրաւ դրուագների ներկայացմանը: Այդ մասը, որը կրում է «Յաղագս վիպասանութեան. յայտարարութիւն գործեալ իրաց Հայկազն Մատթեան Յօհաննէս սպասալարի ռուսաց» վերնագիրը, նուիրուած է զօրավար Վալերիան Մաղաթովի (Ռոստոմ Մաղաթեան, 1782-1829) քաջագործութիւնների ներկայացմանը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում²²: «Անդրկովկասեան կորպուսի հրամանատար գեներալ Ա. Երմոլովը, որը մեծապէս զնահատում էր Վ. Մաղաթովի ռազմական փորձառութիւնը եւ անձնական քաջութիւնը, նրան նշանակեց հրամանատար այն ջոկատի, որը պիտի շտապէր կասեցնելու Աբբաս Միրզայի բանակի առաջխաղացումը»²³: Այստեղ Հեղինակը վիպական շնչով պատմում է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի յաղթական ճակատամարտի, Գանձակի գրաւման եւ գեներալ Վ. Մաղաթովի իրականացրած դարադադեան արշաւանքի մասին: Եւ Յ. Զաքարեանը եւ XIX դարի պատմագիր Միրզա Եոսոբե Ներսէսովն (Յովսէփ Ներսիսեանց) իր «Ճշմարտացի պատմութիւն» երկում ոչ քիչ էջեր են

նուիրել զօր. Վ. Մաղաթովի գործունէութեան ներկայացմանը²⁴: Սակայն, եթէ Մ. Յ. Ներսէսովը, գտնուելով Արցախ ներխուժած Աբբաս Միրզայի քեռու՝ Ամիր խան սարդարի զօրաբանակում, հանգամանօրէն ներկայացնում է պարսկական բանակում տիրող իրավիճակը, ապա Յ. Զաքարեանն իր Հերթին մանրամասնօրէն նկարագրում է Վ. Մաղաթովի մարտավարական հնարքները Շամխորի ճակատամարտում, որոշ լրացումներ աւելացնելով գոյութիւն ունեցող պատմական գրականութեանը:

Այս մասին յաջորդում է «Յաղագս պէսպէս վիպասանութեանց (այլ պատմութիւն): Պատմական վիպասանութիւն» վերնագիրը կրող մի հատուած, որտեղ ներկայացուած է Հայ մարտիկ Պետրոս Զարքազովի սխրանքը Կովկասեան պատերազմում: Սոյն դրուագը, թէեւ անմիջականօրէն չի կապուած պատմութեան բուն նիւթի հետ, սակայն հրատարակում ենք, քանի որ այն կարող է օգտակար լինել Կովկասեան պատերազմում Հայերի մասնակցութիւնն ուսումնասիրողներին: Սոյն մասը եզրափակում են «Դատաստանական վիպասանութիւն» եւ «Կեղծեալ կամ բանաստեղծական» ժողովրդական փոքրիկ զրոյցները, որոնք, արդէն, չենք հրատարակում՝ կարեւորութիւն չեն ներկայացնելու պատճառով:

Աշխատութեան վերջում տեղ է գտել առաջին մասի մի ստուար հատուածի լրամշակուած եւ խմբագրուած տարբերակը, որը Հեղինակը պայմանական նշանով եւ «տե՛ս երես 10, շարունակութիւն կրկին նախագիծ օրինակն գործոյս, այս նշանն եւ լից զպակասութիւն պատմութեանս, որ անդ կայ» գրութեամբ մուծել է առաջին գլխի մէջ: Սակայն նկատի ունենալով այդ մասերի միջեւ առկայ որոշ տարբերութիւնները, մենք երկու մասերն էլ ներկա-

21 Акты Кавказской Археологической Комиссии (АКАК), т. II, Тифлис, 1868, с. 705
22 Այդ մասին մանրամասն տե՛ս Кавказы или подвиги и жизнь замечательных лиц, действовавших на Кавказе. Жизнеописание ген.-л. В. Мадатова и ген.-м. И. Бурцова, СПб, 1859, с. 30-46; Կեանք գեներալ-լեյտենանտ Կենազ Մատթոթովի, Օուշի, 1870, էջ 78-119, Жизнь ген.-л. князя Мадатова, СПб, 1874, с. 91-139.
23 Վ. Թերզիբաշեան, Գեներալ-լեյտենանտ Վ. Մաղաթով, Երեւան, 1942, էջ 15

24 Միրզա Եոսոբե Ներսէսով, Ճշմարտացի պատմութիւն, Երեւան, 2000, էջ 105-137

յացնում ենք անփոփոխ: Ըստ երեւոյթին, Հեղինակը մտադիր է եղել ընդարձակել իր պատմութիւնը, սակայն հասցրել է անել միայն այդքանը:

Վերջում նշենք, որ Յ. Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը գերծ է նաեւ փաստական որոշ սխալներից: Այսպէս, Փանահի խանութեան սկիզբը Հեղինակը համարում է 1780 թուականը, մինչդեռ նա, համադրածակցելով Վարանդայի Մելիք-Շահնազար Բ-ի հետ, վերջինիս թողուութեամբ դեռեւս 1752-ին էր հաստատուել Արցախի սրտում: Այնուհետեւ, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Ռ. Տիտանեանը, «Շուշեցին ոչինչ չի ասում պատմական այն իրողութեան մասին, որ 1795 թ. ամռան վերջին, երբ Աղա Մուհամմադ խանին չի յաջողուած գրաւել Շուշին, նա Արցախում թողնում է փոքր զօրախումբ՝ պաշարումը չարունակելու նպատակով եւ ինքը հիմնական զօրքով անցնում Վրաստան, գրաւում եւ աւերում նրա մայրաքաղաքը: Չի ասուած նաեւ այն մասին, որ Աղա Մուհամմադ խանի հրոսակները Թիֆլիսն աւերելուց յետոյ որոշում են ձմեռել Մուղանի դաշտում՝ գարնանը պատերազմական գործողութիւնները վերսկսելու միտումով, եւ թէ ինչպէս ռուսական զօրքերի՝ դէպի Անդրկովկաս շարժելու լուրը հարկադրում է Աղա Մուհամմադ խանին թողնել Մուղանը եւ վերադառնալ Պարսկաստան»²⁵: Յ. Զաքարեանը հազուադէպ է նշում նաեւ իր նկարագրած դէպքերի տարբերութիւնը:

Իսկ զօրավար Վ. Մաղաթովի գործունէութեան նկարագրութեան մէջ որոշ դէպքերում նկատուած են իրադարձութիւնների յաջորդականութեան խախտումներ: Այսպէս, Գանձակի գրաւումը, որը տեղի է ունեցել 1826 թ. սեպտեմբերի 4-

ին²⁶, ներկայացուած է 1826 թ. սեպտեմբերի 3-ին տեղի ունեցած Շամխորի ճակատամարտից առաջ: Իսկ պարսից բանակը դէպի «բարեբեր կողմանս վերին Հայոց»²⁷ «զբօսանքի» առաջնորդողը ոչ թէ իրանի 1797-1834 թթ. շահը՝ Ֆաթալիին էր, այլ նրա աւագ որդի, թագաժառանգ Աբբաս Միրզան (1783-1833): Մնացած անճշտութիւնները նշուած են ծանօթագրութիւններում:

Սակայն պէտք է նշել, որ Յ. Զաքարեանը «բերում է Շուշի բերդաքաղաքի պաշտպանութեան այնպիսի հետաքրքրական մանրամասնութիւններ, որոնք բացակայում են Հայկական միւս աղբիւրներում՝ մի հանգամանք, որն առաւել զնահատելի է դարձնում Յ. Շուշեցու Պատմութիւնը»²⁸: Իսկ Յ. Զաքարեանի աշխատութեան մէջ առկայ որոշ թերութիւնները, որոնք ամենեւին էլ չեն նսեմացնում այս պատմագրական երկի արժէքը, թերեւս առաջ են եկել իր նկարագրած դէպքերը յիշողութեամբ վերարտադրելու պատճառով: Նկատենք նաեւ, որ Հեղինակը ընթերցողների ներողամտութիւնն է հայցել իր երկում տեղ գտած հնարաւոր անճշտութիւնների համար. «Զօր ինչ պատմեցաք եւ ունեմք պատմել զգաւառէս ի լսելոց անտի ի հաւուց կամ ի հարց մերոց՝ զորս ի յիշողութեանս իմում մնացեալն էր ի բազմաց սակաւագոյնս գրեցի՝ խնդրեմ ներել՝ վասն զի քանի մի անուանք ի պատմութեանս փոխարկեալ են ի յատկութենէ իւրեանց. ի յիշողութեամբ լինելոյ զգործս եւ զանցս որ ընդ նոսա՝ օտար անուամբ, յորջորջեցի զնոսա»²⁹:

26 Տե՛ս АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, с. 374
27 ՄՄ, ձեռ. թիւ 2734, թերթ 15բ
28 Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի ... արշաւանքների մասին, էջ 20, ատե՛ր Պ. Չորանեանի գրախօսութիւնը Ռ. Տիտանեանի կազմած գրքի մասին.- ԼՀԳ, 1982, թիւ 6, էջ 100:
29 ՄՄ, ձեռ. թիւ 2734, թերթ 12ա

25 Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի ... արշաւանքների մասին, էջ 21

Յ. Զաքարեանի Պատմութիւնն ընթերցելիս երեւում է, որ նա գրողի ճիւղ է ունեցել: Դա երեւում է յատկապէս պատերազմական տեսարանների՝ նրա պատկերաւոր նկարագրութիւններից, երբ հեղինակի գրիչը պարզապէս վերածւում է թշնամուն հայրենի երկրից վտարող մարտիկի: Նրա աշխատութիւնն ընթերցւում է մեծ հետաքրքրութեամբ:

Յ. Զաքարեանի Պատմութիւնը, չնայած որոշ ակներեւ չափազանցութիւններին, Վարդան Օձնեցու «Նոր քաղաքական եւ եկեղեցական պատմութիւն Հայաստան աշխարհի մեծի եւ փոքու»³⁰ եւ Առաքել Կոստանեանցի երկհատոր «Պատմութիւն Արցախի»³¹ աշխատութիւնների հետ մէկտեղ կարելոք սկզբնաղբեր է Արցախի XVIII դարի վերջի եւ XIX դարի սկզբի պատմութեան համար, արժանի դուրս ելնելու ստուերից:

Այժմ հրատարակելով Յակոբ Զաքարեան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը՝ փակագծերում նշել ենք ձեռագրի համապատասխան էջը, բացել ենք յապաւումները, իսկ բաց թողնուած տառերը՝ լրացրել ուղղանկիւն փակագծերի մէջ, ինչպէս նաեւ հանել ենք ի նախդիրից առաջ դրուած ապաթարցերը, ուղղել բացայայտ գրչական սխալները եւ սրբագրել կէտադրութիւնը՝ համաձայնեցնելով արդի հայերէնի կանոններին:

1/ա/ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱԲՈՒՆ ԱՐՏԱԽՈՒ

Գրեալ ի Յակոբ սարկաւազէ Պողոսեան Զաքարեանց Շուշեցոյ, միաբան սուրբ Երուսաղէմի յամին 1853, ի սուրբ Երուսաղէմ

Յամի Տեառն 1780-ին ընտրեցաւ ի շահէն Պարսից գաւառապետ Արցախու, որ եւ Ղարապաղը՝ խան ոմն ազգաւ պարսիկ³², սա եկեալ Հրովարտակաւ թագաւորին³³ նստել տիրէր Ղարապաղու, եւ ամյամէ զամենայն յարկսն Հանեալ ի ժողովրդէն՝ եւ յղէր թագաւորին: Կառաւարէր զվիճակն իւր ամենայն խոհեմութեամբ եւ քաղաքավարութեամբ, որպէս ընդ Համազգիս, նմանապէս եւ ընդ քրիստոնեայս: Խտրութիւն ոչ գոյր յաչս խանիս մի օրինակ ընդ մեծատունս եւ ընդ աղքատս քաղցրութեամբ թէ ի հարկապահանջութեանն, թէ ի դատելն խօսէր. մանաւանդ զտատաստանս տկարաց եւ տնանկաց ոչ թողոյր ի ձեռս կաշառառու տատաւորացն, այլ ձեռամբ իւրով վճռէր, զի մի աղքատը գտցին դատապարտեալ: Չքաւորաց բաշխէր զեզինս յաղակս երկրագործութեան եւ որում պիտոյ լինէր ցորեան եւ այլ ինչ առանց վաշխի ի փոխ տայր. յորժամ կարողացէն, յայնժամ վճարեցէն զփոխան: Միով բանիւ արդար էր գործով այրս: Յաչս ամենեցուն՝ Հաճոյ թուեցաւ այսպիսի առատածեռնութիւն իւրով մանաւանդ

32 Խօսքը Փանահ խանի մասին է, որը ոչ թէ պարսիկ էր, այլ վաչկատուն թուրքական ջիւանջիր ցեղի մի ճիւղի՝ սարջալուների ցեղապետը: Նա, օգտուելով Արցախի մելիքների երկպառակութիւններից եւ համագործակցելով Վարանդայի Մելիք-Օահնազար Բ-ի հետ, վերջինիս թողտուութեամբ 1750-ականներին հաստատուել է Արցախի սրտում (Արա տոհմաբանութիւնը տե՛ս Միրզա Ադիգեալ-բեկ, *Карабаг-наме*, Баку, 1950, с. 49-52, АКАК, т. II, с. 695):

33 Փանահը, օգտուելով Նադիր շահի սպանութեանը յաջորդած քաոսից, Ատրպատականի կառավարիչ Ամիր Ալիան Ղրղլուի միջնորդութեամբ, կարողացել է Իրանի նոր գահակալ Աղլի շահից խանութեան ռաղամ կորզել (տե՛ս Միրզա Ադիգեալ-բեկ, *ук. соч.*, с. 52, Մ. Ե. Ներսէսով, *Աշխ.*, էջ 48):

30 ՄՄ, ձեռ. թիւ 4331
31 ՄՄ, ձեռ. թիւ 7822, 7823

յաչս Հայոց, որց տեսեալ էր զչարութիւնս աւիրաւ յափշտակող խանիցն՝ որք յառաջ քան զնա տիրել էին ի վերայ իւրեանց: Չսա իբրեւ թագաւորի պատուէին մեծարել: Համազգիք նորա, այսինքն՝ պարսիկը տեղոյն, միաբանեալ ընդ Հայս, Հաւատարիմ արամբք ինդիրս մատուցին շահին պարսից. պողօքելով զի մի զխանս մեր ելցէ ի գաւառապետութենէս Ղարապաղու մինչեւ ցվախճան կենաց սորա: Իբրեւ ընկալաւ թագաւորն զինդիր ժողովրդեանն Հաճոյ թուեցաւ նմա՝ զի յոյժ սիրէր զխանն ի սակս խաղաղութեամբ կառավարելոյն զվիճակն: Սա եւ զեկամոտս գաւառին առաւելագոյն քան զառաջին խանն ցուցեալ էր թագաւորին, ընդ որ Հաւանեալ թագաւորին ինդրոյ ժողովրդեանն՝ գրեաց Հրովարտակն այսպէս, զի մի միայն ինք լինիցի, այլ եւ յետ վախճանի դորա որդի իւր լինելոց է ի վերայ ձեռ գլուխ եւ պետ: Եւ արքն ուրախութեամբ պարգեւս ընկալեալ ի թագաւորէն ունելով ընդ ինքեանս զՀրովարտակն դարձան առ խանն եւ Հրովարտակն ետուն ի ձեռս նորա:

Եւ խանն յոյժ յուրախութենէն Հրամայ[ե]աց ինչոյս առնել առաջի ամենայն մեծամեծացն Հայոց եւ պարսից եւ ընթերցեալ եղեւ Հրովարտակն ի լուր ամենայն գումարելոցն՝ նորա եւս ոչ սակաւ ուրախացան:

1/բ/ Պատմելոյս ցայս վայր վանն խանին երեւեցաւ զի բարի էր այրն գործով բայց աստ երեւի զի զոր ինչ բարիս գործեաց նա ոչ էր յօգուտ ժողովրդեանն, այլ ի փառս մարդկան եւ յօգուտ անձին իւրոյ եւ մեծութեանն: Ըստ բանի Տեառն՝ ծառն ոչ կարէ առնել պտուղ բարի, եթէ չար է: Չի անօրէնս զորս սերմանեաց յառաջագոյն՝ ի մտի ետեալ էր փոխարէնն արմատաքի խլել սերմանեալն, Հարիւրապատիկ յափշտակելով զաղքատս եւ զքրիստոնեայս: Որպէս տեսանեմք՝ զի յորժամ զժողովուրդն Հաւանեցոյց Հանդերձիք ոչխարաց. եւ Հրովարտակն թագաւորի եղարկոյն. յերկուց կողմանցն միամտացեալ ձեռնարկեց նեղել զՀպատական այսպէս:

Յետ երից ամաց բաժանեաց զգաւանս յերիս մասունս, յորոց առաջին մասն էտ ցիշխանն Հայոց Մելիք Հաւանազարի: Երկրորդն ցիշխանն Մելիք Թանկիին. ի մաստութեամբ բաժանեաց չարն. գիտէր զի Հայք ջանան առաւել օգտի այլազգաց, քան ազգին իւրեանց, եւ իշխանք Հայոց եթէ ձեռս արկանեն՝ ի մեծութիւն ինչ՝ զազգս իւրեանց յափշտակեն եւ անձամոռ լինեն ընկերաց ի ձեռս դատաւորաց՝ զի ինքեանք միայն երեւելի լիցին յաչս նոցա:

Իսկ երրորդ մասն բաժանեաց բեկաց պարսից, զի ամյամէ որքան առաւել կարացեն մերկացուցանիցեն յնչից զգառինս անմեղս եւ մասն ինքեանք կրանել եւ մնացեալն ցուցանել խանին: Եւ յետ ժամանակաց ինչ կոչեաց խանն զմեծամեծս եւ զիշխանս յերկուց ազգաց ասէ ցնոսա կամիմ զի բերդ մի տալ շինել բայց չգիտեմ տեղի մի ամուր եւ յարմար. յառաջեաց Հաւանազարն եւ ասէ ցուցից մեծութեանդ լեռանս մի, որ արօրագիր է գեղջին Շուշոյ. բաց ի տեղոյն ոչ գտանէք յայլ ուրէք ամրագոյն քան զայն՝ եւ ըստ կամաց ձերոց յարմար շինութեան բերդաբաղաքի:

Հաւանեցաւ խանն բանից իշխանին եւ ելեալ Հեծելովք ընդ մեծամեծնս գնացին ի լեռան, ուր ցուցաւ նոցա յիշխանէն եւ տեսեալ փառս ետուն Աստուծոյ, զի գտին զտեղին բաց ի կիսոյ յարեւելեան կողմոյն շրջապատել յատեղծողէն աւազին եւ բարձրագոյն սարօք, ընդ որ չիք հնար ումէք անցանել ընդ ապառաժս, որ շուրջ զտեղեան ոչ մարդիկը եւ ոչ անասունք անցին: Միայն թէ թեա ունիցեն անցանելոյ չունիմք երկբայութիւնս:

Եւ յորժամ տեսին եւ Հաւանեցան, Հրաման եւան խան ընդ ամենայն գաւառն՝ յիւրաքանչիւր տանէ այր մի ժողովել՝ զի եկեցէն Հացիւն իւրեանց ի շինութիւն բերդին³⁴: Ըստ Հրամանի խանին իւ-

34 Այստեղ խօսք կարող է լինել միայն բերդի վերակառուցման մասին: Անվիճելի է, որ Օուշիի բերդը կար նաեւ միջնաւայր (տե՛ս *Армяно-русские отношения в XVIII веке*, т. II, ч. I, Ереван, 1964, с. XLI; Բ. Ուլուբաբեան, *Ոսկէ շղթայ*, Երեւան,

րաքանչիւր գիւղականը ընդ ինքեանս ունեղով զիշխանս իւրեանց ժողովեցին եւ զամենայն որմն]ադիր ճարտարապետս ի լեառն այն: Հիմնարկին շինութեան 50 աշտարակի ի մէջ Հինգ Հազար կանգնաչափ /2ա/ երկարութեան պարսպին: Հիմնարկութիւնս այս միայն ի կէս բերդին էր, իսկ մնացեալ կէսն՝ որպէս յիշեցաք՝ Սատուծոյ էր ամրացուցեալ: Ամառնային էր ժամանակն, յորժամ սկսան դնել պարիսպ ի վերայ Հիման: Ի կատար լերինն մարդիկը, որք ի ծարաւ սոթոյ արեգական, եւ որք ի սաստիկ ցրտաշունչ Հողմոյ գիշերային ժամոյն բացօթեայք ցրտաւար լեալ անկան մեռեալք, ի մէջ տանն աւուրց անձինս յիսուն եւ երկերիւրոյ չափ անկան ի ջերմ եւ ի տենդ, իսկ որք առողջ համարեալքն էին, նոքա եւ փախստեայ դարձան ի տոռնս իւրեանց: Յայսչափ խղճութիւնս տեսեալ խանն ոչ խղճացաւ նոցա: Այլ կրկին Հրամայեաց զօրականացն իւրոց, զի երթեալ ի գիօղս, ուր գտանիցեն անոնք զերիտասարդս, զծերս եւ զպատանիս բռնի. թէեւ ի տանն միայն իցէ ոք, զնա եւ անոնք անխնայ: Եւ զինուորքն գնացեալ զորս գտին բռնութեամբ գանիւ ածին ի լեառն, եւ մնացեալքն թաքեան փախստեայ ի ծերպս եւ ի Հովիտս լերանց, ի փապարս քարանց եւ ծառոց, յանտառս եւ յայգետանիս, թողեալ զտոռնս եւ զընտանիս իւրեանց, զկալս եւ զվաստակս յարձակավայրի ի կերակուր գազանաց եւ թրչնոց:

Իսկ որոց բռնի տարան՝ նախքան զշինութիւն պարսպին. ետուն շինել Հովանաւոր Հարկ մի վանն ժողովրդեանն, զի մի ի բացի ննջեցեն գիշերայն. եւ ի սաստիկ սոթոյն կէս աւուր ժամոյն՝ ընդ Հովանեաւ նորա Հանկչեցեն քանի մի ժամ: Յետ այնորիկ յիւք Հիւանդաց պակասեցան:

Յետ լրանալոյն շինութեան պարսպի եւ աշտարակաց բերդին անուանեցին բերդաքաղաք **Շուշի**, զի վայրն այն որպէս յիշեցաք ազարակ է գեղջին **Շուշոյ**, վանն

1979, էջ 359-362, Պ. Չորանեան, «Շուշի եւ Քարազլուի սղմախների նուազման հարցի շուրջ», «ՊՐՀ», 1994, թիւ 1-2, էջ 184-187):

այնր անուամբ գեղջին յորջորջեցին զքաղաքն: Ի յարեւելեան կողմանս քաղաքիս բաժանի գետ մի յերկուս առաջս, առաջին մասն Հարաւային եւ երկրորդ մասն Հիւսիսային կողմամբք պատեալ ընթանան եւ Հեռի ի քաղաքէն երեք ժամաւ ի մի միաւորեալ կրկին երթայ յընթացս իւր, ոռոգանելով զբազում այգիս եւ զազարակս եւ թափի ի մէծ գետն կուր, իսկ խանն Հրամանաւ շահին յայտարարութեամբ Հրաւիրեաց զբնակիչս մօտակալ] գաւառաց եւ գիւղորէից այսպէս: Որք ի բնակութիւն եկեցին ընտանեօք ի քաղաքս նորաչէն՝ ազատ են յամենայն Հարկաց եւ ծառայութեանց եւ լուեալ բնակչաց գաւառացն **Ղազանչու**³⁵ եւ **Ագուլիսու**³⁶ եւ այլոց՝ բազումք՝ ինդութեամբ թողեալ զայգիս, զազարակս եւ զտոռնս իւրեանց՝ առին զընտանիս իւրեանց, եկին ի բերդաքաղաքն **Շուշի** եւ շինեցին իւրեանց բնակութիւնս եւ բնակեցան անդ: Մինչեւ ցայս օր ժողովուրդն բաժանի յերիս՝ ագուլեցիք, զազանչեցիք, մեղրեցիք³⁷ եւ /2բ/ զարապաղցիք:

Շինեցին իւրեանց եկեղեցիս: Առաջին եւ Հոյակապն է Ագուլեցոցն՝ կառուցեալ

³⁵ Խօսքը Երեւանի գաւառի Ծախկերտ աւանի մասին է, որը «բնակիչների մեծամասնութեան պղնձագործ լինելու պատճառով ուներ Արագանչի (կաթսայագործ) անունը» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. IV, Եր-ան, 1972, էջ 193): Ծախկերտցիներից շատերը 1750 թ. Նախիջեւանի Հեյրաբկույի խանի գործի դեմ մղած պայքարից յետոյ հեռացել են Ղափան, իսկ հետագայում գաղթել Շուշի (այդ դեպքերի մասին տե՛ս Չամչեանց Մ., Հայոց պատմություն, հտ. Գ, Երեւան, 1984, էջ 848):

³⁶ Շուշիի ագուլեցի վերաբնակիչների մասին Լեոն գրում է. «Մի բազմամարդ գաղթականություն էլ Ագուլիսից գնաց Շուշի, անշուշտ, Ազատ խանի կատարած աներանքներից յետոյ, երբ, շատ ագուլիսցիներ տեղափոխուեցին գանազան կողմեր: Ագուլիսցիներն էլ առանձին թաղ կազմեցին» (տե՛ս Լեո, *Երկերի ժողովածոյ*, հտ. Գ, գիրք 2, Եր-ան, 1973, էջ 272):

³⁷ Շուշիում հաստատուած մեղրեցիների մասին Լեոն գրում է. «Մի երրորդ գաղթականություն էլ Մեղրիից գնաց Շուշի, բայց սա անելի սակաւամարդ էր եւ այքի չէր ընկնում իր հարստութիւնով ու դիրքով» (տե՛ս Լեո, նշ. աշխ., էջ 272):

յանուն ամենասուրբ Աստուածածնայ³⁸, եւ երկրորդն յանուն սուրբ խաչին Քրիստոսի³⁹: Գոն եւ այլ երկու փոքրիկ եկեղեցիք եւ վանք մի կուսանաց⁴⁰: Հայազգի բնակիչք վիճակին Ղարապաղու եօթանասուն Հազար Հօգի թուեն ընդ ձեռամբ վիճակաւոր առաջնորդին Բաղդասարայ Արքեպիսկոպոսին ի ցեղէն մեծ իշխանապետին Աղուանից Հասան Չալալեանց⁴¹:

Պատերազմ ճահին ընդ խանին Ղարաբաղու

Եւ յորժամ յօրինեցաւ բերդաքաղաքն **Շուշի**՝ ետ խանն շինել եւ զերկուս փոքրիկ ամրոցս, որ է **Ղալէս**. վեց ժամաւ Հեռի ի քաղաքէն դէպի յարեւելեան կողմն, ուր

³⁸ Ագուլեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին կառուցուել է 1822 թ., եւ մինչեւ Ղազանչեցոց եկեղեցու կառուցումը համարուել քաղաքի ամենամեծ հոգեւոր մշակութային կենտրոնը, որի համար էլ կոչուել է «աւագ» (տե՛ս Ծ. Մկրտչեան, *Հեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, Երեւան, 1980, էջ 158-159. նոյնի՝ *Историко-архитектурные памятники Нагорного Карабаха*, Ереван, 1989, с. 185):

³⁹ Մեղրեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին կառուցուել է 1833 թ. (տե՛ս Ծ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 159, III. Мкртчян, ук. соч., с. 185):

⁴⁰ Կուսանաց անապատի Ս. Աստուածածին եկեղեցին կառուցուել է 1816 թ. (տե՛ս Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 236):

⁴¹ Բաղդասար Հասան-Չալալեան (1775-1854) - Արցախի առաջին թեմակալ առաջնորդը: Ծնուել է Գանձասար գիւղում: Մկրտությունն ու կրթութիւնը ստացել է Գանձասարի վանքում: 1830 թ. Եփրեմ կաթողիկոսը նրան նշանակել է Արցախի մետրոպոլիտ: 1836 թ., երբ հաստատուել են կոնստանտինուպոլսի կաթողիկոսը նրան նշանակել է Արցախի թեմի առաջնորդ: 1837 թ. որպէս առաջնորդ հաստատուել է Շուշիում: Թաղուած է Գանձասարի վանքի գաւառում (նրա մասին տե՛ս Գ. Տէր-Յովհաննիսեանց, «Բաղդասար մետրապոլիտ Հասան-Չալալեանի համառօտ կենսագրութիւն», *Փորձ*, 1880, թիւ 5, էջ 131-164. Բ. Ուլուբաբեան, *Հայոց Արեւելից կողմանց եկեղեցիք եւ մշակոյթը*, Երեւան, 1998, էջ 265-273. Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, *Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը* 1813-1933 թթ., Երեւան, 2001, էջ 905-906):

վերոյ յիշեալ երկու կետքն՝ ընդ այլ եւ երկուց կետոց եւ բազում գետանման աղբերոց միաւորեալ ի մի գետ ընթացեալ անցանէ ընդ Հովիտս երկուց մեծամեծ լերանցն Ասկարանու, ի վերայ որոց շինեցան ամրոցքն. մէկն յայս կոչս գետոյն եւ միւսն յայնկոյս՝ դէմ Հանդիման միմեանց: Ընդ մէջ երկուց ամրոցացն անցանէ եզերաւ գետոյն ճանապարհս Պարսից եւ Թիփլիզու: Ասպէս ամենայն կողմամբք պնտեր զնորաչէն քաղաքն⁴²: Յորժամ դադարեցաւ խանն յամենայն շինութեանս՝ սկսաւ Համբարել բազում ցորեան ի կերակուր յամրոցս եւ ի քաղաքն: Ոչ ոք իմանայր ի գաւառականացն զխորհուրդս նորա, բաց միայն ի պատուաւոր բեկացն, որք գործակից եւ խորհրդակից էին խանին: Սկսաւ զօր ժողովել եւ գոնտ կազմել եւ առաքել յամրոցս, բաշխելով առատապէս նոցա զոր ինչ պիտոյ լինէր, որով սուէր եւ որ[ու]մ Հրացանս եւ երկսայրի սուրս՝ խոստանալով մեծամեծ պարգեւս յետ կատարելոյն կամաց իւրոց: Եւ զամենեսեան զինուորեալ բազմամեայ պատրաստեալ պարգեւօքն, վճարեաց զկեանս իւր⁴³ անկատար թողեալ զկամս իւր: Բայց ի տեղօջ Հօրն նստուցին զորդին վերոյիշեալ բեկքն՝ զիբրահին խանն գաւառապետ Ղարաբաղու⁴⁴:

Այրս այս յոյժ քաջասիրտ էր եւ աներկիւղ: Յետ քանի աւուրց Հրովարտակ թագաւորին Հասաւ նմա, զի փութով ժողովեցէ զՀարկս ի ժողովրդեանս եւ առաքեցէ շահին, զի յոյժ պիտոյ է: Եւ նա գրեաց առ շահն եւ ասէ. չունիմ ընկալեալ պատուէր ի Հօրեւ ումէք տալ Հարկս ոչ թագաւորու-

⁴² Ժամանակի ռազմական տեխնիկայի տեսակետից անադիկ պարիսպները կրաքարից էին՝ 7-8 մ բարձրութեամբ եւ ուժեղացուած կիսաշրջանաձեւ, սնամեջ բուրգերով: Բերդապարիսպներն ունեցել են չորս մուտք: Հիւսիսարեւելեան դարպասը սկզբնական շրջանում կոչուել է Ջրաբերդի, իսկ հետագայում՝ Գանձակի, Եփրատապոլի, հարաւ-արեւմտեանը՝ Երեւանեան, հարաւայինը՝ Ամարասի, արեւելեանը՝ Մխիթարաշէնի անուններով (տե՛ս Ծ. Մկրտչեան, նշ. աշխ., էջ 149. III. Мкртчян, ук. соч., с. 177):

⁴³ Փամահ խանը մահացել է 1762 թ.:

⁴⁴ Իբրահիմը Ղարաբաղի խան էր 1762-1806 թթ.:

Թեանդ եւ ոչ ումէք: /3ա/ Եւ ստացեալ զթողթն Իբրազիմ խանին Շահն պարսից զայրացաւ յոյժ ի սրտի իւրում, բայց առ- ժամայն վնաս ոչ ինչ կարաց Հասուցանել նմա՝ յերկիւղէն լռեաց առժամանակ մի, զի մի երկուստեք լինիցին Հակառակորդ թշնամիքն՝ մինչեւ արքունի զօրքն դար- ձուցին ի պատերազմէն Խորասանու: Յետ խաղաղացուցանելոյ զքաղաքն Հերաթայ, քանի մի գոնստ ցարքունի զօրացն դար- ձան ի թագաւորանիստ քաղաքն Թէհրան զօրապետօքն իւրեանց: Եւ նոյն ժամայն ետ զնա ի ձեռս Հասան Ղուկի Հազարա- պետին՝ եւ առաքեաց զնոսա ի Թավրեժ առ որդին իւր Սուլէյման շահաւտան⁴⁵, զի նա ի գաւառացն Թավրեժու ժողովեցեք եւ քանի մի գոնստ Հեծեալ զօրաց՝ եւ ա- ռեալ երթիցէ ի Ղարապաղ առ ի զսպէլ զապստամբութիւն Իբրազիմ խանին եւ զօ- րացն նորա, եւ եթէ Հսար իցէ ըմբռնեցեն զնա կենդանի եւ տարցեն առ շահն: Յոր- ժամ զօրքն Հասան ի Թավրեժ՝ Սուլէյման շահաւտան գրեաց թողթս յորդորական եւ խրատական այսպէս՝ սիրեցեալ եղբայր իմ Իբրազիմ խան, ի Հօրէ իմմէ ընտրեալ պետ եւ գլուխ գաւառիդ Ղարապաղու գիտեմ, զի այդ յանցանք ոչ է քո արարեալ, այլ ապստամբ բեկաց է Ղարապաղու, որք չա- րութեամբ ետուն քեզ ընդդէմ կալ թագա- տրութեանս պարսից, զի ելցէ գաւառդ ի ձեռանէ քումմէ, եւ դու մատնեցիս ի մահ: Որո՞վ բանականութեամբ գործեցիր զայդ- դու խան մի գորով զիմ րդ ընդ դէմ կաս թագաւորի միոյ: Չգիտե՞ս զի, եթէ բար- կանայ շահս մեր, առանց բանի պատե- րազմի անհամար բազմութիւն զօրաց թա- փեցէ ի վերայ գաւառիդ եւ կոխան ոտից տացէ առնել զդա: Այլ անսա բանիցս եւ էջ ի մեծամիտ Հպարտութենէդ եւ փութա եկ առ իս, եւ ես եղեց Հաշտեցուցիչ ընդ մէջք եւ Հօրն իմոյ:

45 Աղա Մուհամմադ խանը Անթիպի էր: Սուլէյման սարդարը Արա մերձաւորներից մէկն էր եւ Ատր- պատականի կուսակալը (տե՛ս Ս. Բутков, ук. соч., ч. II, с. 326):

Պատասխանի թղթոյն Սուլէյման շահաւտային գրէ Իբրազիմ խանն: Աղուէ- սութեամբ զկանայս քո պատրեա՛ւ. միթէ կարող ինչ իցես պատրողական բանիւդ խաբել զիս, որպէս Հօրեղբօրն իմոյ, այդ- պիսին տարեալ, ետուր բրել զերկուս աչս նորա եւ Հրամայեցիր տանել արգելանոցն Արտաւէլու, որոյ վրէժս ի քէս կամ Հօրեղ- քումմէ ըստ կարի իմում առից որքան կեն- դանի եմ: Թող թափեցէ զզօրս իւր եւ տացէ կոխան առնել ոտից զերկիրս: Յա- ռաջագոյն թուեալ եմ, զոր ինչ պիտոյ է վասն շինութեանս՝ զորս կամիմ ձեռս ար- կանել, որ կարող իցէ քակել զսա՝ թողյա- ռաջ մատիցէ: Նայեցեալ Սուլէյման շահ- զաւտային, թէ ոչ ինչ օգտեցաւ յորդորա- կան բանից իւրոց, այլ առաւել զգաստա- ցոցն⁴⁶ զնա նովաւ: Եւ առաւել շուրջանակի ամրացուցանէր թաքստեա զօրօք, զգոյշ լերուք քաջալերեցարուք ասէ՛ մեծամեծ պարգեւս ընդունիցիք յինէն. յաղթեցուք եւ յարկս մի՛ տացուք շահին պարսից- զօրքն եւ բնակիչք գաւառին առՀասարակ կամակիցք եղէն Իբրազիմ խանին՝ վասն վշտալի շարակիր ծառայութեան, զոր կրէին Հանապազ, կա՛մ զծառայել եւ կա՛մ կեանս վճարել:

/3բ/ Ըստ Հրամանի Շահին Սուլէյման շահաւտան սկսաւ ժողովել Ատրպատա- կան աշխարհէն Հեծելազօրս եւ Հետեւակս բազումս՝ զի առեալ ընդ արքունիսն եկե- ցէ ի վերայ գաւառին Ղարաբաղու⁴⁷, ժա- մանակ էր Հսնոյ: Իբրեւ լուան գաւառա- կանքն, թողեալ զմնացեալ Հսնոյն եւ զխրճոնս կուտակեալ յագարակի՝ եւ զվաստակս ի կալօրայս շեղեալ թողին եւ առեալ զաղիս եւ զարջառս իւրեանց փա- խեան կեքն ի Չրաբերդն Խաչենու, կեքն յամրոցան Ասկարանու եւ մնացեալքն, որք չունէին զարջառս ի քաղաքն փախեան:

46 Բնագրում այդպէս է:
47 Ըստ Պ. Բուտկովի՝ Սուլէյման սարդարը Աղա Մուհամմադ խանից այդ հրամանը ստացել է 1793 թ. ամռանը (տե՛ս Ս. Բутков, ук. соч., ч. II, с. 326-327):

Իսկ որոց բնակութիւնս Հեռի էր յամրո- ցացս թաքեան ի լերինս եւ յանտառս:

Իսկ քաջ անուանեալքն գեղջին Շու- շոյ, որ եւս մինչեւ ցայսօր կանայք եւս եւ մանկտիք զինուորեալ շրջին, եւ ի գիշերն, յորժամ ի քուն մտանէն, ոչ արձակեն զգէսս յինքեանց: Սորա չերկեան փախչելը, ի ներքս քաղաքին, արք եւ կանայք նոցա առՀասարակ, այլ գնացին առ Իբրազիմ խանն՝ եւ ասէս. մի՛ երկնչիր՝ մէք միայն պաշտպանեցուք բերդաքաղաքս, միայն թէ տուր մեզ որքան կարեւոր լիցի վառօտս: Խանն յոյժ ուրախացաւ եւ ետ նոցա զոր ինչ պիտոյ էր Հանձնեալ եւ նոքա առեալ գնացին ի տուրս արտաքոյ քաղաքին ի կողմն Հարաւային՝ գտին ի ստոր լեռնա- պատ պարսպին՝ բարձր ի խարխիւէ լերին յինսնաչափ գանկնաւ ի ներքս ի լեռնս քա- ռայր մի յոյժ մեծ եւ առասանեա սանտի- տով ի վեր ելին եւ զամենայն աղիսս իւ- ռեանց առասանաւ ի վեր քարշեցին, մտին ի ներքս քարայրոյն եւ ինքեանք նախ սկսան ճանապարհ բանալ իւրեանց իջա- նելոյ ի քարայրէն, եւ այսպէս ճանապարհ շինեալ ընդ ճակատ լերինն, զի Հազիւ մարդ մի կարացէ կամ իջանել ի ստոր կամ ի վեր ելանել, այնպէս ամրացուցին զտեղին, որ միով արամբ ընդիմանային Հարիւրաւորաց եւ այն ոչ զինու, այլ քա- ռամբք: Իբրազիմ խանին տեսեալ զամրու- թիւն տեղոյն շուշեցոց, ետ տանել զգանձս իւր եւս եւ զարծաթեղէն եւ զոսկեղէն ա- նօթան ի քարայրին⁴⁸: Գուցէ, թէ քաղաքն եթէ առնուցուն, ինչք իւր մի յափշտակե- ցի, մինչեւ վախճան պատերազմին:

/4ա/ Առեալ զբազում գոնդս զօրաց Սուլէյման շահաւտային՝ եւ անցոյց ընդ գետն Երասխ, որ է սահման ի մէջ Ղարա- բեան Երասխ, որ է սահման ի մէջ Ղարա- բաղու եւ Ատրպատական գաւառացն եւ եմուտ ի գաւառն Ղարաբաղու, եկեալ մօտ ի գետն Շուշոյ՝ յանդիման մասի քաղաքի:

48 Ըստ երեսնոթիս, այս պատճառով է Օուշիի հա- րաւ-արեւմուտքում գտնուող այդ ձորը հետագա- յում ստացել խազիմեդարասի (թորք.՝ գանձերի ձոր) անուանումը (տե՛ս Մ. Ե. Ներսիսեան, Աշ- աշխ., էջ 46):

Բայց ոչ այնքան մօտ ի քաղաքին, այլ միով թնդանօթաձիգ նպատակաւ Հեռի: Եւ ա- ռաքեաց շահաւտան զմի ի ծառայից իւրոց առ Իբրազիմ խանն եւ ասէ. տուր պա- տասխանի՝ անձնատուր լինիս, եթէ քաղա- քատուր: Իսկ Իբրազիմ խանն պատասխա- նեաց՝ ոչ Հնազանդիմ ասացելոյդ, այլ գնա ասա դու ցՍուլէյմանն, թող բռնութեամբ փորձեցէ զկամս իմ, չերկնչիմ ի բազմու- թենէ կանանցդ քոց: Բարկացեալ Սուլէյ- ման շահաւտան եւ զօրքն ամենայն ընդ պատասխանի խանին, զի կանայս կոչեաց զնոսայս: Սկսան ի գիշերոյ յայնմանէ մինչ երեք օր արձակել ոռամբս ի վեր քաղաքին. ի ձայնից մեծամեծ թնդանօթացն Հովիտք աղաղակէին, եւ կանայք յղիք սրտաթափ լեալ զերեխայս կորուսանէին յորովայնի, գնդակք թնդանօթաց, որք նման Հնացեալ լուանոյ՝ կարմրացեալք ցողանային յօղս ճախարակելով թօթափէին ի վերա քաղա- քին. բայց թուլացեալք ի զօրութենէ Հեռի լինելոյն վասն նպատակին: Վասն այն ոչ առնէին ներդրութիւն քակտման պարս- պաց, այլ ընդ Հարեալ պարսպացն անկա- նէին յերկիր: Այսպէս երեք աւուր անդա- դար թնդանօթաձիգ եղէն՝ բայց քաղաքին վնաս եւ ոչինչ եղեւ, միայն երիտասարդի միոյ, յորժամ մայրն լուանայր զգլուխ սի- ռելի որդւոյն իւրոյ՝ գոնդ մի յարձակեալ ումբոց անտի՝ յանկարճ էանց ընդ պատու- Հան տանն եւ ցրուեաց զգակաթ որդւոյն եւ բազուկք մօրն խորտակեաց. երկոքին ան- կեալ ի վերա լուացիկ կոնքին դիաթաւալ եւ մեռան:

Իսկ Սուլէյման շահաւտան տեսեալ թէ ոչ ինչ վնասի քաղաքն այնքան թնդա- նօթաձիգութենէն, գաղտ Հրամայեաց բա- նականացն ի գիշերին ժողովել զվրանս իւ- ռեանց եւ զանիւս օճանել իւղով զի մի ճոնչեցեն, եւ ի բազում տեղիս բազմաբոց կրակս վառել եւ թողուլ այնպէս վառեալ: Կատարեցին որպէս Հրամայեաց՝ փութով ի գիշերին ելեալ ամենայն բանակն անյայտ ի բնակչաց տեղոյն տեղափոխեալ եկին ի ձորն Տովթալապ կոչեցեալ լերինն, որ մոտ էր քաղաքին, Հրացանի նպատակաւ. գլուխ լերինն յանդիման էր ըստ մեծի մասին քա-

գրադարն ընդ անցս ճանապարհին, զոր ինչ գտանիցեն բաց չորից տարերաց. խանգարեսցեն, հրոյ եւ սրոյ ճարակ տայցեն: Չսպիտակացեալ արտորայս հրկիզեցին, նմանապէս զգիւղորայս, զայգիս արմատաքի Հատանէին եւ զամենայն ծառս պտղաբերս, նոյն օրինակ զմարդիկ եւ զանասուն սրախողխող արարին, զինչս նոցա յափշտակեցին մինչեւ եկեալ Հասին ի Վարանդու փոքր գաւառ կոչեցեայն, որ է մասն Ղարաբաղու: Իսկ Իբրահիմ խանն եւ այլ ամենայն ընդ իւր միաբանեալ բեկքն եւ ամենայն գաւառն առ Հասարակ պատրաստեցան ընդդէմ նոցա: Եւ յամենայն կողմանց գաւառին քաջքն ժողովեալ ի բերդան ակն ունէին գալստեան նոցա:

Եւ Սուլէյման շահապատան զօրօքն իւրովք՝ սկսեալ Երասխ գետոյ զառաջիկայս ասպատակելով կամ անապատս դարձուցանելով եկեալ եհաս մինչեւ ի գիւղն Շուշի՝ Հարին զլրանս բանակին անդ ի գեօղն: Եւ բաժանեաց զամենայն զօրս իւր ի չորս մասոնս. մասն մի ետ ի ձեռս Յուսէին Ղուլի Հազարապետին եւ առաքեաց զնոսա ի յարեւմտեան կոյս քաղաքին ի Չարսլի գիւղն: Երկրորդ մասն ետ այլում զօրապետի եւ առաքեաց յարաւային կողմն ի գիւղն Քարատակ. երրորդ մասն ի ձեռս Թահմազ Ղուլի Հազարապետին եւ հրամայեաց գնալ ի ձորն Ճեղքեալ կոչեցեալ լերինն յանդիման քարայրին շուշեցոց. բայց պարսից անյայտ էր անդ լինելն նոցա: Եւ առեալ զզօրս իւր Թահմազ Ղուլին եկն եւ մօտացեալ ի Ճեղքեալ լեան, որ ոչ է ճեղքեալ՝ այլ՝ երկու լերինք բարձունք յոյժ եւ մօտ են միմեանց արտեանօք այնպէս, զի տեսանողն կարծէ, թէ է լեռն մի եւ անջատեալ ընդ մէջ որպէս սրով: Եւ կարծէ որ թէ Հնար ինչ իցէ կամուրջս շինել ի վերայ գլխոց նոցա: Բայց յայնչափ խորովեանէ ձորոյն, որ ընդ մէջ նոցա եւս եւ գնաց գետոյ, որ ընդ ձորն, անհարին երեւցուցանեն զգործն: /8ա/ Եւ սա այս Թահմազ Ղուլիս մտօք ընդոստնելով ընդայն կարծէր Հնարիք եւս անցանել զօրօքն իւրովք եւ մտանել ի քաղաքն: Քանզի մինն ի լերանցն էր աստուածաշէն պարիսպն

քաղաքին: Եւ յունայն կարծեաց, անտի Հպարտացեալ ասէ՝ վարչաւ երիւարաց խում զձորդ եւ պաշարեմ զքաղաքն: Չայս բան լուեալ շուշեցոց մախային ի սիրտս իւրեանց եւ սպասէին, թէ որպէս սրոյ ճարակ տայցեն զնոսա: Իսկ Սուլէյման շահապատան ժամանակս նշանակեալ ընդ զօրապետն՝ թէ յորում աւուր ունին յանկարծ պաշարել զքաղաքն. յետ առաքելոյ զնոսա ի տեղիս իւրեանց՝ ինքն մնաց ի բուն բանակի անդ եւ սպասէր լրանալոյ ժամանակին:

Եւ յետ երկուց աւուրց գիշերայն ամենայն զօրքն պարսից յամենայն կողմանց եկեալ պաշարեցին զքաղաքն: Եւ ի ծագել առաւօտուն ազդ եղեւ քաղաքին, թէ պաշարեցի(ս) պարսիկք զքաղաքս իւրեանց: Ամենեքեան առՀասարակ մերժեալ զերկիւղն ի բաց՝ սրտմտովեամբ եւ ամենայն զօրովեամբ վառեցան որպէս հրով: Արք՝ թողեալ զկանայս եւ զտունս իւրեանց, Հանդերձ Հրացանիք եւ սուսերօք ընթանային դէպ ի յարեւելեան կողմն քաղաքին, ուր մարդաշէն եւ տկար պարիսպն էր: Իսկ կանայք չհանդուրժեալ թողին զստնդեայս եւ զմանկտիս ի տունս՝ արշաւանօք ընթացան ի գլուխ Աստուածաշէն լեռնապատ պարսպին. եւ փրծուցանէին ի լեռնէ անտի զքարինս մեծամեծս եւ գէլին ի վերայ զօրաց նոցա, այնպէս զի ի գլին միոյ քարի զքսան կամ զերեսունս ի պարսից միանգամ անշնացուցանէր: Փոքր Համարելով զայս վնաս նոցա՝ քաջուհիքն խորհէին, զի այլով իւրք Հնարով մեծամեծ Հարուածս տայցեն ի վերայ նոցա: Եւ ի մօտ տեղի ինչ կայր գերանս կուտակեալս՝ արձակեալ ի վերայ եւ առիւծաբար ի վեր քան զտկար կանացի զօրովինս իւրեանց՝ մղելով դարձուցանէին զծանր եւ զերկար Հեծանսն եւ Հողովէին զառ ի վար լերինն: Եւ զբառասունս կամ զիսունս միանգամ չարաջիւղայն խորտակէին այնպէս, զի յետ միոյ ժամու ի բազմաթիւ զօրաց անտի սակաւք կարացին փախչիլ ի դաշտն, ուր ամենայն զօրքն էին, անտ եւ Սուլէյման շահապատան իւրեանց: /8բ/ Եւ իբրեւ յերից կողմանց չկարացին վնասս ինչ Հասուցանել քաղաքին՝ այլ Հաղթեալք ի քաջուհեաց եւ զբա-

զումս ի զօրակցաց իւրեաց կորուսեալ անդեղեն պարտեալք եւ փախեան անդէս. եւ ամենեքեան ընթանան ի մի ժողով ի գլուխ լերինն Դովթալապու առ զօրագլուխն իւրեանց Սուլէյման շահապատան: Ուր գտանարեցան նոքա էր, յանդիման յնգետասան աշտարակաց պարսպի քաղաքին եւ մօտի նպատակ թնդանօթաց: Իբրեւ ետես Իբրահիմ խանն, թէ ժողովին ի մի գումար՝ Հրամանս ետ այն օր յառաւօտէ մինչեւ ի կէս աւուր, զի մի ամենեկն յաշտարակաց եւ կամ պարսպաց անտի արձակեցեն ոչ թնդանօթս եւ ոչ Հրացանս՝ այլ Համբերեցեն մինչեւ ամենայն բազմութիւն զօրացն պարսից ի մի վայր գումարեցին: Եւ ի վեց ժամու աւուրն, իբրեւ գումարեցաւ ամենայն զօրքն ի գլուխն Դովթալապու՝ արձակեցան ամենայն պարսպաց թնդանօթս երեսուն Հետզհետէ անդադար ժամի. այնպէս ցրուեցան անհամար բազմութիւն ընդ Հովիտս եւ ընդ փապարս լերանց, մինչ ոչ գտանիլ երկու զինուորակիցք ի միասին: Յորժամ լուաւ Հասան Ղուլի բեկն՝ զօրապետն ամրոցացն Ասկերանու, թէ զօրքն պարսից պարտեցան, առեալ զամենայն զզօրս իւր, պնտեցաւ զկնի նոցա եւ կոտորելով Հասոյց մինչեւ Երասխ գետն. բայց ոչ Հասաւ Սուլէյմանին, զի սատակեցէ ոչ Հասաւ Սուլէյմանին, զի սատակեցէ զնա. վասն զի, իբրեւ տեսեալ էր նմա, թէ ցրուեցան եւ փախեան զօրքն իւր՝ ինքն յառաջագոյն, քան զնոսա կամեցեալ ապրեցուցանել զանձն՝ առեալ քսան Հեծեալս ի զօրապետաց կամ Հազարապետաց իւրոց ի փախեալ ի գաւառէ անտի սեւ երես ի Դավրէժ. եւ զօրքն նմանապէս զրկել կեալ ի Հովուաց՝ խաշանց՝ գազանաբէկ եղեն ի զօրացն Իբրահիմ խանին եւ Հասան բեկի, յայնչափ զօրաց անտի Հագիւ թէ երկերիւր այր թաքչելով ազատեցան ի ձեռաց նոցա. եւ յետ երից աւուրց անցեալ ընդ Երասխն եւ զոյժս տարան զօրագլխոյն իւրեանց՝ թէ մէք միայն կարացաք ապրիլ Երեսաց նոցա:

/9ա/ Եւ իբրեւ լուաւ շահն պարսից, թէ կորեան այնչափ բազմութիւն զօրացն իւրոց՝ դառնացաւ յոյժ եւ խռովեցաւ Հոգին նորա ի նմա: Բայց նայեցեալ ի փոքրկու-

թիւն գաւառին անհարին սրտմտովեամբ կատաղէր եւ ասէ՝ առաջի շահապարացն, որ է նախարարաց իւրոց՝ կենդանի է անձն իմ, եւ ինքնին երթայց եւ մի մնացէ ի գաւառին շունչ կենդանի եւ կամ ծառ պտղաբեր: Եւ ժողովեալ յամենայն կողմանց տէրովեանն իւրոյ անթիւ զօրս ի ժամ Հնձոցն՝ եւս եւ ամենայն Արաղստանցիք ընդ նմա գային խայտառակիլ: Եւ խորտալով եկեալ եհաս մինչ ի Դավրէժ եւ ի նմին աւուր Հրամանս ետ շահն ածել առ ինքն զՀազարապետն՝ որք ընդ որդոյ իւրոյ թողեալ զզօրն իւրեանց փախուցեալ էին. յորժամ զառաջեան ածին զնոսա, Հրամանս ետ ամենեցոնց զաչան բրել եւ զմատոնս ոտիցն Հատանել եւ տանել ի յանցատրաբնակ քաղաքն Արդաւէլ: Եւ ապա առեալ զզօրս իւր անտի խաղաց ի վերա Ղարապաղու⁵⁰, եկեալ բանակեցաւ մերձ ի բերդիցն Ասկերանու եւ քանի մի օր մարտ ետեալ ընդ նոսա, իբրեւ ոչ կարացին յաղթել խոտորեալ ի ճանապարհէն շահն զօրօքն եկն եւ բանակեցոյց զզօրս ամենայն ի գլուխ գեղջին Շուշոյ⁵¹, Հարկանելով զմեծամեծ վրանս: Եւ ապա առաքեալ պատգամաւորս առ Իբրահիմ խանն եւ ասէ այսպէս՝ գնացէք ասացէք ցխանն, թէ ես ոչ մարտեաց ընդ քաղաքիդ, այլ աստ եղից զգաւս իմ եւ զօրօք պաշարեցից զքաղաքդ մինչեւ ի սովու զմիմեանս կերիջիք եւ յայնժամ ինքնակամ կամօք աղաչեսջիք անձնատուր լինել ինձ. քանզի գիտէր, թէ ոչ գոյ ի քաղաքին եւ ոչ յարտաքս կերակուր. վասն զի երէք ամբ եղեւ, զի ի ժամ Հնձոց դիմէին ի վերայ գաւառին եւ ոչ տային թոյլ ժողովել զվաստակս իւրեանց⁵²: Եւ ժողովուրդ քաղաքին գան-

50 Աղա Մուհամմադ խանի արշաւանքն Ղարապաղ տեղի է ունեցել 1795 թ. յուլիս-օգոստոս ամիսներին:
 51 Ծանփ բանակատեղի գտնուում էր «Նաբաթ-խան» կամ «Ծահ-իւրտ» կոչուած վայրում (տե՛ս Մ. Ե. Ներսէսով, Աջ. աշխ., էջ 67):
 52 Համաձայն տեղեկութիւն կայ Առեւ Յովհան Ռուկերչեանի «Յիշատակարան ազգային արդեան պատմութեան համար» երկում, կոտմկ Հայոց աշխարհի, 1862, թիւ 7, էջ 287:

գատեին զԻբրաչիմ խանն եւ ասեն՝ թոյլ տուր մտցեն ի քաղաքս եւ իւրեանց լիցի. եւ մեք՝ ժամանակ Հսձոց է, ելցուք եւ Հոգաս-ցուք մեզ կերակուրս, որքան կարող իցեմք, զի լաւ է անկանիլ ի ձեռս թշնամեաց, քան թէ սովամահ սատակիլ գուցէ ողորմեացեն եւ թոյլ տացեն մեզ Հոգալ զպարուստ: Բայց նոքա ոչ էին լուեալ զերդմանն շահին, թէ ոչ պարեցուցից զմի ոք ի նոցանէ: Եւ Իբրաչիմ խանն յորժամ ետես, թէ խոտորեալ է սիրտ ժողովրդեանն, Հարկ եղև նմա փախչիլ: Ի միում գիշերի երաց զդուռն քաղաքին եւ փախեաւ անտի յիսուն ընտանեօքն եւ ԴՃ (400) բեկօքն իւրովք ի լեռն Կիւրոսի եւ անդ մնաց⁵³: /9բ/ Իբրեւ լուաւ Աղա Մամատ շահն, թէ փախեաւ ապստամբեալ խանն Իբրաչիմ ի քաղաքէ Շուշոյ՝ եւ եկն տիրեաց նմա առանց բանի պատերազմի եւ ետ ածել զառաջեալ զամենայն իշխանսն Հայոց⁵⁴ եւ չարչարել զնոսա բազմատեսակ տանջանօք, զի ստոյգն ասացեն զորքանութենէ յընչից իւրեանց: Չոմանս գլխիվար կախեին, ոմանց ի պարանոց արկանեին Հրացեալ կասկարայս եւ Հրացեալ շամիրօք խարեին զմարմինս նոցա: Եւ ոմանց՝ կարմրացեալ սկահակս անցուցանեին ի վերա սկահակի գլխոյն՝ եւ եւ այլով բազմատեսակ կոշկոճանօք վշտացուցանեին զամենայն բնակիչս քաղաքին: Չոյն չարչարանս ետուն կանանց եւս. ասելով գիտեմք զի ոնիք պաշտօնս ծրարեալս, անօթս արծաթեղէնս, ոսկեղէնս եւ կամ զայլ ծանրագին ազանեկիս բերիսջիք շահին: Եւ իբրեւ այսպէս յինգ օր տանջանօք անինայ պարզեաց զամենայն քաղաքն յնչից՝ մինչեւ զեկեղեցիս եւս. վասն զի կա-

նայք անճարացեալք, թէ զինչ տացեն այլ ինչ ոչ մնաց՝ զի տացեն ի զերծուցանել զարս իւրեանց ի վշտացն՝ մտանեին յեկեղեցիս եւ փրթուցանեին զարծաթս յաւետարանաց՝ տարեալ մատուցանեին շանց, զի ազատեցեն զնոսա:

Յայսպիսի դառն տանջանս տեսեալ զժողովուրդսն մինն ի ծառայից շահին (ըստ ոմանց սենեկապետն)⁵⁵ մորմոքեր ի սրտի եւ չճանդուրծեալ ասէ ցշահն՝ դարձի՛ր եւ դադարեալ յանգիծութենէդ, մերկացուցեր զամեղ ժողովուրդդ յընչից՝ միթէ ի մորթոց իւրեանց Հանել կամիս զդոսա: Ասէ ցնա շահն՝ մոլեգնեալ ցամամբ ո՛չ այդպէս, այլ որովհետեւ կարի գթասիրտ եղեր վասն քրիստոնէիցդ՝ ես ի վաղին զկասկաս գլխոց անմեղ ասացեալ ի քէն ժողովրդեանդ՝ քոյին գլխովդ Հայրեալ պսակեցից. եւ թէ իւ իմացիս՝ աճա տամ քեզ զառճաւատչեացն: Իսկոյն յոտն եկաց շահն եւ Հանեալ զսուսերսն /10ա/ եւ Հատ զերկուս ականջս ծառային՝ ձեռամբն իւրով եւ ետ ցանել զաղ ի վերայ՝ զի առաւել մորմոքեացի եւ այսպէս եթող զնա ի կսկծի ցաւուն: Եւ ծառայն գնաց եմուտ ի սենեակ իւր դառնացեալ սրտիւ, զի մտաւ ածեր, թէ զինչ արարից ի վաղին, այլ ոչ եւս իցեմ տացէ սպանանել զիս անօրէնս այս ընդ այդչափ ժողովուրդդ, գիտեմ ասէ ինքն յինքեան՝ զինչ արարեց. եկ բարձ գշարդ ի կենաց ի միջոց՝ եւ փրկեցի ժողովուրդն ի ձեռաց դորա՝ թէ եւ Հարկ լիցի զկեանս քո դնել ի վերայ, բայց քաջալերաց, զի գտցես Աստուծոյ զողորմութիւնս: Եւ յորժամ գիշեր եղև, այսպէս քաջալերելով զինքն՝ եւ ի մէջ գիշերին՝ մոնն՝ եւ յուշիկ գաղտ գնացիւք եմուտ ի սենեակ շահին, ուր ննջեալ էր նա՝ ոնեղով ի ներքոյ բարձին փոքրիկ երկայրի սուսերն. առեալ զայն միեւեց խստիւ եւ ուժգին ի սիրտ շահին՝ եւ շահն ընդոստուցեալ դառնագին ի քնոյ տաց քեզ ասէ այս ինչ մեծութիւն կամ

53 Նկատի ունի Իբրաչիմ խանի փախուստը Դաղստան՝ իր անըր Ումմա (Օմար) խանի մօտ (տե՛ս Мирза Адигезаль-бек, укр. соч., с. 86-87, Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասեան արշավանքների մասին, էջ 18, 31, 103, 163, եւն):

54 Ձերբակալուածների մէջ էին Վարանդայի Մելիք Ծահնագարի որդի Մելիք Ջումշուդը, Մուլա Փանահ Վաղիֆը եւ շատ ուրիշ ազնուականներ ու իշխանատիրներ (տե՛ս Մ. Ե. Ներսէսով, Աշխատքներ, էջ 74):

55 Նկատի ունի շահի սենեկապետ Սաֆար Ալիին, որն Արքաս բեկի հետ սպանեց Արան:

այն ինչ մի սպանաներ զիս⁵⁶: Իսկ ծառայն ասէ՝ անիրաւ արեանարբու՝ դո՛ւ ոնեկիր Հեղու զարին զայսչափ ժողովրդեանն, ընդ որս եւ զիմն՝ ասելով ե՛հան զսուրն եւ մխեաց չարաչար եւս կրկին՝ երրորդ՝ եւ չորրորդ անգամ մինչեւ փչեաց զդառնացեալ Հոգին ի մահճի անդ. եւ ընկողմեցոյց զդի նորա ծածկելով օթոցան: Եւ ի սենեկէն, առանց ուրուք իմանալոյ, եւ փախեալ գաղտ անտի յարշալուսի առաւօտուն եւ եկն յեկեղեցիս Հայոց, ուր ժողովեալ սգային եւ լային առաջի Տեառն վերայ մեղաց իւրեանց, ասելով ըստ երից մանկանց արդարութեամբ եւ յիրաւի ածեր զայս ամենայն ի վերայ մեր՝ վասն մեղաց մերոց մատնելով զմեզ ի ձեռս թագաւորի անօրէնի եւ չարի: /10բ/ Այլ մի՛ մատնեղ զմեզ իսպառ վասն անուան Բրիստոսի եւ մի՛ ի բացեալ առներ զողորմութիւնս քո ի մէջ վասն որդոյդ միաճնի եւ ամենայն ընտրելոց դասուց: Եւ ասէ զժողովուրդն, զի լայք դառնապէս Աստուծոյ ձեր ողորմեցաւ ձեզ՝ ձեռամբ իմով ետ սատակել զթագաւորն չար՝ արդ մի՛ յեղգայք առաքել արարին՝ թագ պատգամաւորս առ Իբրաչիմ խանն՝ զի եկեալ Հալաճեաց զզօրս նորա եւ տիրեսցէ քաղաքիս: Բայց նոքա ոչ Հաւատացին՝ Համարեին թէ փորձիչ է՝ եկեալ ի շահն ի գողանալոյ զսիրտս իւրեանց: Եւ ծառայն երդուեցաւ ի դէնն իւրեանց եւ ի Հաւատս նոցա եւ ցուցեալ նոցա զականջն իւր, պատմելով զանց իրին: Եւ նոցա ընտրեալ զերկուս Հեծեալս առաքեցին առ Իբրաչիմ խանն, զի փութանակի զօրօքն ընթացէ ի քաղաքն: Եւ իբրեւ առաւօտ եղև՝ զօրապետքն եւ ամենայն մեծամեծքն զօրքն Հանդերձ ի պատրաստի ոնեկին սրեալ զզայրացեալ սիրտս իւրեանց եւ զսուսերս՝ սպասեին, թէ իբր արթնուցու շահն ի քնոյ՝ զի խողխողեցին սրով զամենայն բնակիչս քաղաքին ըստ Հրամանի նորին եւ զտոնանն նոցայ յափշտակեցեն. է

անց երրորդ ժամս, ոչ ոք էր, որ իշխեր մտանել ի սենեակ նորա ի զարթուցանել զնա. զի մտեալ էր նա ի յաւիտենական խորին քունն մահուն, որ ոչ գիտէին նոքա: Եւ ի վեց ժամու աւուրս առաքեցին զմի ի սիրելի ծառայից նորա ի սենեակ շահին՝ լուեալն իմանալ ի քուն իցէ արդեօք թէ յարթուն, ուր ծառայն մտեալ, ետես, զի Հեղեղ արեան ներկեալ էր զտոնն. եւ շահն կայր դեռեալ ի քուն: Չհամբերել /11ա/ ծառային ի բաց մերժեաց զերկիւղն եւ բարձրաձայն կոչելով տէ՛ր իմ, շա՛հ իմ եւ ի մօտ եկեալ ի բաց ձգեաց զօթօցն ի նմանէ՝ եւ եգիտ զնա անշնչացեալ: Իսկոյն ընդօստացեալ արտաքս մեծաւ աղաղակաւ ասէ պարսկական լեզուաւ. «Շահ մօրտաս, էջ բրատարան», որ թարգմանի. «թագաւորն մեռեալ է, ո՛վ եղբայրք»: Եւ ով կարէ պատմել, թէ որպէս ի միում ժամու այնչափ անթիւ զօրք նորա որպէս փախեան, թողեալ զզէնս եւ զամենայն պատերազմական գործիս եւս եւ զդի շահին իւրեանց⁵⁷: Որովհետեւ նեղ էր դուռն քաղաքին եւ անհնարին էր ի միում ժամու ելանել այնչափ զօրաց եւ բազումք ի նոցանէ՝ լուեալ թէ Իբրաչիմ խանն գայ զօրօքն՝ արտաքս ընկեցին զինքեանս ի պարսպէն եւ այնպէս փախեան ամենեքեան յերկիրն իւրեանց: Եկն Իբրաչիմ խանն եւ տիրեաց քաղաքին եւս եւ բազում ընչից զօրացն պարսից մեծամեծ թնդանօթաց, Հրացանից, զինուց, ոսկոյ եւ արծաթոյ, եւ եղև յոյժ Հարստացեալ այնուհետեւ: Եւ զդի շահին ետ ի ձեռս Հայոց, որ եւ նոցա կապեալ ի զպարանօց նորա տոռամբ քաջէին ընդ փողոցս քաղա-

57 Վարդան Օձնեցի Անգրամասնում է. «Մուհամմադ բեկ եղբոր որդի Իբրահիմ խանի տիրապետեաց գանձուց եւ ընչից արքայի իբրեւ տէր երկրին այնմիկ, եւ զգոյնս շահին առաքեաց ընդ ձեռն ուրումն Թաֆի բեկի ի Բելաքեան առ Իբրահիմ խանն եւ զայն առաքեաց Իբրահիմ խանն առ Հերակլ արքայ» (տե՛ս Հայկական աղբիւրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասեան արշավանքների մասին, էջ 195. Բ. Տիտանեան, «Վարդան Օձնեցի պարսիկների 1795-1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքի մասին», ՊՂՀ, 1965, թիւ 3, էջ 222, Ասե՛լ Մ. Յ. Ներսէսով, Աշխատքներ, էջ 76):

56 Ըստ աւանդութեան՝ մահից առաջ շահն արտասանել է հետեւեալ խօսքերը. «Թշուառակա՛ն, դու սպանեցիր իրանը» (տե՛ս «Տարագ», 1890, թիւ 10, էջ 142):

քին եւ ընդ աղբիւնսս մինչեւ ցրուեցան ամենայն անդամքն նորա, եւ ապա ընկեցին ի ձոր մի եւ այսպէս եղև կերակուր գազանաց եւ թռչնոց: Եւ այնուհետեւ նստաւ յաթոռ նորին զմի յորդոց նորա⁵⁸, որ խնդիր արար առ Իբրաւհիմ խանն, թէ ոչ առաքեցես ասէ առ իս կապեալ ոտիւք եւ ձեռքք զթշնամին իմ, որ սպան զՀայրն իմ, կրկին անգամ խոտովթին լինի ընդ մէջ պարսիցս եւ գաւառիդ: Եւ Իբրաւհիմ խանն ասէ լաւ է, առն միոյ մեռանել քան կրկին պատերազմ յարուցանել, /11բ/ որ լինի պատճառ Հեղման արեան բազմաց. կապեաց զայրն եւ ետ տանել որդոյ շահին՝ նորոյ շահի: Եւ իբրեւ տարան ի Թեւրան ի նմին աւուր Հրաման արար շահն ամենայն ազգականացն իւրոց առնուլ մի մի սուր դաշնակ եւ գալ ի դուռն թագաւորին, ուր կապեալ կայր շահասպանն ի ծառոյ: Նախ շահն եւ ապա մայրն նորա եւ ամենայն բազմութիւն, որք էին քան զգազանս բազում արձակեցան ի վերայ եւ կտրատեցին զնա ի բազմութիւ մասուս եւ յետոյ այրեցին Հրով եւ զփոշին ետուն Հողմոց: Այնուհետեւ դադարեցաւ խոտովութիւն ընդ մէջ պարսից եւ զարապաղոց մինչեւ ի պատերազմն ուսաց ընդ պարսս:

Եւ յորժամ նուաճեցին ուսք ընդ ձեռամբ զամենայն Արաստան եւ տիրեցին մայրաքաղաքն նոցա Տփխիսայ, արարին զայն փոխարքայանիստ ուսաց եւ յետ քանի մի տարոյ, իբրեւ տեսին առաջնորդն Ղարաբաղու յազգէն Ջալալեանց, ըստ ոմանց կաթողիկոսն Գանձասարու՝ եւս եւ բազումք Հայազգի յիշխանացն տեղոյն՝ թէ ուսք այլ եւս ոչ կամին ընդարձակել զսահմանս իւրեանց՝ զի գուցէ եւ յայնժամ գաւառն իւրեանց եւս անկանիցի ընդ իշխանութեամբն նոցա՝ եւ ազատեալ լինէին ի ձեռաց պարսից. միաբանեալ գրեցին թուղթս ողբանաց առ փոխարքայն ուսաց, որ ի Տփխիս՝ այսպէս՝ մէք յուսա-

ցեալքս Աստուած՝ ակն ունեաք, թէ երբ ձեռամբ թագաւորութեանդ ուսաց ծառայիցդ Քրիստոսի ազատեցցէ նոյն ինքն Քրիստոս փրկիչն մեր ի ձեռաց անօրէն պարսիցս՝ զմեզ զՀաւատացեալքս յինքն՝ եւ զկրօնակիցս ձեր: Որք եմք ընդ /12ա/ ձեզ մի Հօտ միոյ նոյնոյ Հօտապետին: Ապա ուրեմն նախանձ նորա շարժեցի յօրհնեալ սիրտս քրիստոսազօր թագաւորութեանդ՝ տեսանելով զանպատմելի զվիշտս եւ նեղութիւնս մեր, որ ի պարսից աստի, փութացի ազատել զմեզ ի ձեռաց սոցա եւ տիրել մեզ եւ երկրիս մերում բարելի. եւ պատրաստ եմք ամենայն յօժարութեամբ մարտակից լինել ձեզ եւ մինչեւ ուր Հաճեսցիք ամենայն տերութեամբ նուաճել ընդ ձեռամբ ձերով եւ տիրեսցիք բազում քաղաքաց մասին Հայաստանու օրհնեալ երկրին:

Ի միջոցս բազում անցք անցեալ էին եւ ի գաւառիս, բայց ի մոռացօնէ⁵⁹ առ մեզ. եւ զօր ինչ պատմեցաք եւ ունեմք պատմել զգաւառէս ի լսելոց անտի ի Հաւուց կամ ի Հարց մերոց՝ զորս ի յիշողութեանս իմում մնացեալն էր ի բազմաց սակաւագոյնս գրեցի՝ ինդրեմ ներել՝ վասն զի քանի մի անուանք ի պատմութեանս փոխարկեալ են ի յատկութենէ իւրեանց. ի յիշողութեամբ լինելոյ զգործս եւ զանցս որ ընդ նոսա՝ օտար անուամբ, յորջորջեցի զնոսա: Բայց ետ բազում անցից անցանելոց՝ քանի մի ամաց ուսք երեսս ընդդէմ պարսից դարձուցին եւ կամեցան մարտ դնել ընդ նոսա: Նախ անձնատուր եղև նոցա գանձակեցիք⁶⁰ եւ ապա առաքեցին ուսք դեսպանս առ Իբրաւհիմ խանն Ղարապաղու⁶¹, տո՛ւր ասեն զպատասխանին՝ անձնատուր լեալ տա՛ս ի ձեռս մեր զգաւառու, եթէ ոչ՝ պատրաստ լեր մարտիցոյք ընդ միմեանս՝ կամ յողթեցոյք եւ կամ յողթեալ յետս դարձոյք: Եւ խանն ժողովեալ զամենայն

59 Բնագրում մոռացօնէ է:
60 Գանձակի բերդը գրաւուել է 1804 թ. յունուարի 3-ին (տե՛ս AKAK, տ. II, c. 592):
61 Ցիցիանովի Ամակը Իբրաւհիմ խանին տե՛ս AKAK, տ. II, c. 696:

58 Աղա Մուհամմադ խանի սպանութիւնից յետոյ գահ բարձրացաւ նրա եղբորորդի Բաբա-խանը, որը Ֆաթալի շահ անուամբ 1797-1834 թթ. գահակալեց Իրանում:

զբէկս եւ զծերունիս ի թուրքաց գաւառին եււարց խորհուրդ ի նոցանէ, /12բ/ որպէս կարծէք ահա թշնամին մեր եւ օրինացն մերոց կայ ի դուրս եւ կոչէ զմեզ ի պատերազմ, եթէ կարող իցեմք մի՛ տացուք թոյլ զերկիրս ձեռանէ մերմէ, այլ մինչեւ ցմահ ընդդիմացուք դոցա: Վասն զի, եթէ սոքա տիրեցեն երկրիս մերում, զմեզ կամ սպանիցեն եւ կամ տարագիր արասցեն: Իսկ մէք չունելով Հաշտութիւն գոնէ ընդ պարսս, որ լինէր տեղի ապաստանի, կորնչիցեմք ի միջի սոցա, որ ի միջի պարսից եւ ուսաց: Պատասխանի ետուն քանի մի ի բեկացն չար Հպարտից, որք ոչ էին փորձեալ կամ լուեալ զքաջութիւնէ ուսացն, ասին խա՛ն թագաւոր եւ մեր այսուհետեւ յաւիտեան կաց, մէք Հաղթեցոյք եւ խորտակեցոյք զզօրս եւ զօրութիւնս գաւառիցն. միթէ նոքա զօրաւորք իցեն, քան զպարսիկս, որք անթիւ զօրօք ո՛չ յիշես քանիցս անգամ նկուն եղեալ ի մէջ փախեան եւ բազումք ի նոցանէ սրախողխող եղեալ՝ ոչ ժամանեցան յերկիրն իւրեանց, թող դոքա եղիցին, քան զնոսա: Դարձաւ ոմն ի ժողովելոցն, որոյ անուն էր Մամատ Սան աղան⁶² եւ արհամարհելով զբեկն զայնոսիկ ասէ ցիւան՝ անսա բանից ծառայիս քո եւ մի ելանել ընդդէմ ուսաց՝ ասեմ տեառդ իմում. կենդանի է Աստուած, թէ ոչ թողցեն զբեզ կենդանի: Դոքա ոչ յիշեն՝ թէ եւ բազում անգամ լուեալ են, թէ որպէս զամենայն Արաստան առին ի միջոց փոքր ժամանակի եւ զթագաւորս նոցա բազմաՀալած արարին⁶³: Կամ սարսափելին եւս վասն որոյ քաջ գիտես որպէս արարին ընդ

62 Հաւանաբար խօսքը Իբրաւհիմ խանի աւագ որդի Մահմեդ Հասան աղայի մասին է, որի մահուան առթիւ Ցիցիանովը գրել է. «Խանական ամբողջ տոհմից ոչ ոքի չէի ճանաչում այդքան հաւատարիմ Ռուսաստանին» (տե՛ս AKAK, տ. II, c. 725; իմ Ռուսաստանին» (տե՛ս AKAK, տ. II, c. 65), իսկ արքայազն Ալեքսանդրը անցաւ Պարսկաստան:

63 Նկատի ունի Արեւելեան Վրաստանի թագաւորական տան անդամներին, որոնք ուսական իշխանութիւնների կողմից տեղափոխուեցին Ռուսաստան (նրանց ցուցակը տե՛ս AKAK, տ. II, c. 65), իսկ արքայազն Ալեքսանդրը անցաւ Պարսկաստան:

Նախողիծն եւ ընդ զօրս նորա⁶⁴, յորոց զամենայն Եւրօպայ դողային: Արդ անսա ծառային քո եւ մի տար դեսպանիդ խիստ պատասխանի՝ այլ ծառայ քո, զոր ինչ ասացէ քեզ զբարին՝ եթէ կամիս, զի բարի լինիցի քեզ՝ զայն տացես նմա զպատասխանին:

/13ա/ Ասէ Մամատ Սան աղայն ցիւան՝ այսպէս ասացես ցրեսպանդ՝ ոչ ապաքէն եւ ես իշխան կամ գաւառապետ եմ տեղոյս՝ այնքան արին Հեղի եւ ետու Հեղու պարսից, ընդ որս մինչեւ ցայս օր Հարուածս դնեմք եւ առնուք ի նոցանէ, եւ որպէս գառն ի գայլոց՝ նմանապէս եւ ես զքաղաքս պահպանեցի՝ եւ որոյ յիմն շինութեան սորա եւս ինքնի ետու արկանել. եւ ամենայն զօրութեամբ ջանացի եւ ջանամ ի բարեկարգութեան պահել: Եւ այսօր, եթէ իմովս կամաւ Հանձնիցեմ թագաւորութեանդ ուսաց, միթէ անմասն առնիցէք զիս ի գաւառէս իմմէ կամ ընկենուցոյք զիս ի մասնաւոր իշխանութենէ ինչ, ո՛չ ապաքէն ընդդէմ լինիցի՝ կարծեմ օրինաց քրիստօնէութեանդ ձերում եւ խղճի մտաց ամենայն լողաց: Բայց այժմ այսպիսի ասելովս ո՛չ եթէ կամիմ ընդդիմանալ թագաւորութեան ձերում ի չտալ, որ այդ անհնար է ինձ՝ այլ թողում զձեզ խղճի մտօք դատել եւ առնել: Ի վերայ բանիցս Մամաթ Սան աղային յոյժ Հաւանեցաւ եւ այսպէս ասաց դեսպանին ուսաց: Ելեալ դեսպանին երբ պատասխանին ի Թիփլիզ շիփտուր (ինսպեկտոր- Ա. Մ.) ասացեալ սպարապետին կովկասեան զօրու ուսաց. եւ նա գրեաց զբանս Իբրաւհիմ խանին առ Եկատարին թագաւորին իւրեանց եւ թագաւորին այս, որ նստեալ էր յաթոռ ամուսնոյն իւրոյ Պօղօսի⁶⁵ յետ մեռանելոյն նորա. վասն զի սպառտան էր չափաւաս եւ արժանաժառանգ արու անձանց թագաւորազանց տանն ուսաց: Գրեաց առ

64 Նապոլեոնեան բանակի շախմատումն տեղի էր ունենալու այս խօսակցութիւնից յետոյ՝ 1812 թ.:
65 Խօսքը 1762 թ. պալատական յեղաշրջման մասին է, որի շնորհիւ գահ բարձրացաւ Եկատարին II-ը (1762-1796):

շփեխտուր սպարապետն այսպես՝ թողցես զդա յիշխանութեան իւրում, բայց պաշտպանութիւն բերդաքաղաքին ի ձեռս զօրաց մերոց լինելոց է: /13բ/ Յայսմ միջոցի մեռաւ պատահմամբ ինչ⁶⁶ շփեխտուր սպարապետն, եւ նստաւ⁶⁷ ի տեղի նորա Յիցիանով անուամբ ուսու ոմն⁶⁸, զսա պարսիկք ոսկեոսն⁶⁹ անուանեն (զորմէ ասեն թէ յոյժ քաջ էր լեալ ի պատերազմի եւ գնդակահար լեալ ի կոճ ոտինն ի նմին ժամու տուեալ իցէ ի վեր կոճիցն խարել եւ փովթով դադարեցաւ արիւն եւ անցոյց ի տեղի պակասութեան ոտին՝ յոսկէ ոտն): սա ծանոյց զկամքս թագուհոյն Իբրահիմ խանին եկեցե՛ս ի Թիփլիզ եւ դաշն կարգեցուք ընդ քեզ: Ելեալ Իբրահիմ խան, առեալ ընդ իւր զբազումսն ի բեկաց իւրոց եւ եւ ընծայս բազումս, ոսկիս, արծաթս եւ ականս պատուականս, զերիւարս սրընթացս կամ նազաբայլս եւ զայլս բազումս: Եկն ի Տիփլիս դաշն եղին⁷⁰ ընդ միմեանս այսպէս՝ զի Իբրահիմ խանն տիրեցե՛ ամենայն գաւառին, բայց ամ յամէ այսչափ ինչ

Հարկս տացէ ուսաց, եւ պաշտպանութիւն բերդաքաղաքին Հուշոյ ի ձեռս զօրացն ուսաց՝ եւ զօրքն մի՛ ինչ ունեցին դատելոյ եւ կամ Հարկս պաշտպանելոյ ի ժողովրդէնէն եւ մի յարեցեն ի դատաստան խանին, այլ ի ներքս ի քաղաքն տեղի տացէ նոցա խանն, եւ նստեցին անդ եւ եթէ բուռն ինչ իցէ ուստեքէ խանին եւ կամ ընդիմանայցէ ոք նմա, նուաճեցեն ընդ ձեռամբ նորա. եւ կերակուր նոցայ ի գաւառէ անտի ժողովեցեն: Եւ յետ քանի մի աւուրց գնաց Ստեփանակե անուամբ Հազարապետն ուսաց՝ Հրամանաւ ոսկեոտին՝ բազում զօրք եմուտ ի քաղաքն եւ Հրամանաւ խանին ետ դադարկել քանի մի տուն ի թաղն Հայոց եւ եթող անդ Հարիւրապետ ոմն յոյժ քաջ⁷¹ երեք Հարիւր զօրք Հանդերձ, եւ ինքն դարձաւ /14ա/ գնացեալ զօրքն ի կողմանս Երասխ գետոյ:

Գրեալ Տէր Յակոբ սարկաւազէ Պօղոսեան Չաքարեանց Հուշեցոյ*. յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ**:

66 Խօսքը գեներալ-մայոր Լազարեայ մասին է, որը 1803 թ. ապրիլի 19-ին սպանուեց վրաց իշխանուհի Մարիայի կողմից, երբ վերջինիս պարտադրում էին տեղափոխուել Ռուսաստան (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ց. 114): Հեղինակը սխալմամբ Պ. Ցիցիանովի կառավարչապետ Աշահակունը կապում է այս սպանութեան հետ:

67 Իշխան Պ. Ցիցիանովը Վրաստանի կառավարչապետ է Աշահակունը 1802 թ. սեպտեմբերի 8-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ց. 3):

68 Պաւել Ցիցիանովը (1754-1806) ուսացած վրացի էր, սերում էր Ցիցիլովի իշխանական տնից: Նրա պապը՝ Պատա Ցիցիլովիին, 1725 թ. Ռուսաստան էր տեղափոխուել Քարթլիի Վախթանգ VI թագաւորի հետ:

69 Այստեղ հեղինակը Պ. Ցիցիանովին շփոթում է Վ. Չուբովի հետ, որին արհեստական ոտք ունենալու պատճառով պարսիկները տուել էին «ընդը-զըլ-այաղ» (թուրք.՝ կարմրատ) մականունը (տե՛ս Մ. Ց. Ներսէսով, Աշ. աշխ., էջ 33):

70 Խօսքը 1805 թ. մայիսի 14-ին Պ. Ցիցիանովի եւ Իբրահիմ խանի միջեւ կնքուած Քիւրակ-չայի պայմանագրի մասին է, սակայն հեղինակը սխալմամբ որպէս պայմանագրի կնքման վայր է նշում Թիփլիսը (տե՛ս ԱԿԱԿ, տ. II, ց. 705, նաե՛ւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի արխիւ, Լէօի ֆոնդ, 9. 1, գ. 3):

71 Խօսքը մայոր Լիսանեիչի մասին է: Տե՛ս Մ. Ց. Ներսէսով, Աշ. աշխ., էջ 92, որտեղ կարդում ենք. «Դրանից յետոյ Ն. Գ. գլխաւոր հրամանատարը մայոր Լիսանեիչին 500 զինուորների հետ ուղարկում է Ղարաբաղ»:

* Այս անձը ազնիւ եւ միանգամայն իբր հրեշտակ է եւ վարժապետ կացուցում է պատրիարքէն քաղաքի հայ ժողովրդոց դպրատան, որ քառասունի չափ աշակերտք կան հասարակ կարդացողք եւ տասնի չափ օրիորդք, որոց ձեռքը համանգամայն գիրք չկայ եւ վարժապետք ամսական համարեայ թէ չունին եւ տողոց ծնողք խեղճ ու վրանին գովանին չկայ բաց ի գրեանց, մինչեւ անգամ հարկատրը դուռ չունին եւն, եւն... Ահա՛ այս է կառավարութիւն Յօհաննէս պատրիարքի-ծանօթութիւնը ձեռագրիցն է, գրված է մատիտով:

** Ծանօթ. եւ այս սարկաւազը, 1862 ամին սկիզբները վարդապետ ձեռնադրեցաւ եւ անունը Ղեւոնդ դրուեցաւ, սւեցի Մեարովայ եպիսկոպոսի ձեռամբ, որ 2 տարիի չափ հիւր գնացած էր սուրբ Յակոբայ վանքը՝ տեղւոյն պատրիարքը եւ եպիսկոպոսները վախճանած ըլլալուն պատճառաւ, եւ ինքը՝ (յուսանցքում՝ Մեարովայ եպիսկոպոսը - Ա.Մ.) 1863 մարտ ամսոյ մէջ մեծի պահոց հինգերորդ շաբաթուն վախճանեցաւ, եւ զկնի Չատկին միաբաններէն երեք եպիսկոպոսացու անձիք ընտրուելով Սուրբ Էջմիածին երթալով

/15ա/ **Յաղագս վիպասանութեան. յայտարարութիւն գործեալ իրաց Յայկազն Մատաթեան Յօհաննէս սպասալարի ուսաց**

Եւ յետ ոչ սակաւ արովթեամբ տիրելոյ քաջամարտիկ զօրացն ուսաց անուանեալ քաղաքին Գանձակուն⁷², եւ բուռն զօրութեամբ վանելոյ ի սահմանաց գաւառին զանմարդաբար զօրս չարածճի պարսիցն, ապա ազդումս անհարին լինէր յայնժամ ի սիրտ տիրանէնզ շահին: Քանզի առ որ՝ մինչ ցայն ի Համարի տիրաբեկ եղեկան էին Հետեւողքն Քրիստոսի, եւ տիրողք նոցին թագաւորք քրիստոնէից, այժմ զանհարին աղէտս վտանկի կրեալ ի նոցանէ, իբրեւ զարջ վիրաւոր մրմուլայր ի ցաւոց տախնապեալ սրտին: Չի՛նչ ապա այնուհետեւ առնել Հարկեցաւ ճոյրս սեւագունդ զօրաց՝ կազմեալ պատրաստեր անթիւ բազմութեամբ՝ իբրեւ զբարանց կարկառու Հեղեղատի. մինչ զի՛ ինքն իսկ շահն սքանչացեալ ընդ անթիւ բազմութիւն այրուածի եւ Հետեւակ զօրացն իւրոց, ոչինչ այնուհետեւ զանգիտէր՝ անձամբ իսկ⁷³ ընդ նոսին՝

ոչ իբրեւ ի մարտ պատերազմի դիմել, այլ ի գրօսանս ընթանալ եւ օղափոխիկ լինել ի բարեբեր կողմանս վերին Հայոց: Վասն զի գոյով սա Հետեւող անաստուած բարուց Հայրենի, չարիս խորհէր անհարինս քրիստոնէայ բնակչաց այնր կողման. եւ ի մտի եղեալ՝ ի կարճնութիւն իւր դատեր այսպէս: Հաղթեցից սակաւութն բազմացս զթշնամին, եւ զայլն՝ ասպատակ ընդ երեսս երկրին սիւռեալ՝ աւար Հարից զքրիստոնէայս տեղոյն միահամուռ՝ մինչեւ ի ձոն Հաւու: Եւ յայս միտ դիւակրկիւռ առեալ զերկրածուփ եւ զմարդախոշոշ բազմութիւն գազանաբարոյ զօրացն՝ չուէր խաղայր եւ Հապշեպով ընդ գետն մեծ Երասխ անցեալ⁷⁴ Հասանէր ի գաւառն Արցախոս: Եւ ի լայնանիստ դաշտի միում բանակատեղ սահմանեալ Հանգիստ իւրոց զօրուն առնէր: Իսկ ապա ի սաստիկ շնչմանէ ստորանկեալ ամբարտաւանին, եւ քան զեւ ընդր եւ սա ամբարՀաւաճութեամբ: Կոչէր առ ինքն զմի անտի յիւրոցն, առաքէր նովաւ պարկ մի կորեկ /15բ/ առ Հայագգի զօրապետն Ռուսաց Մատաթով, պակուցանել կամելով աշխարհակոյտ բազմութեամբն կնամարդի զօրացն իւրոց՝ զանխուճապ սիրտ քրիստոսազօր իշխանին: Եւ նա զի՛նչ առ այս պատասխանի. Հղէր Հաւ մի ասելով. որպէս կերակուր լինի կորեկս Հաւուդ, այնպէս բազմութիւնդ ամենայն բաժինք սրոյ լինեն սակաւաթիւ զօրացս խաչազօր: Իրօք կատարեցաւ ասածուած առնս՝ ի Հանդիպիլ իրերաց քաջութեամբ:

Յաղագս բացայտութեան վիպասանութեան. յօտուած Ա

Այլ մեք թողեալ աստ առ սակաւ մի գիրս պատերազմին, որ ինչ բան է ի վերայ

կարգ առին եւ 1863 յուլիսի 20-ին վերադարձան ի Կ. Պօլիս, որոնք էին իսահակ վարդապետը (որ փոխանորդ էր Երուսաղէմայ ի Պօլիս) եւ միայն այս եկաւ Պօլիս՝ իր պաշտօնը վարելու համար եւ բացակայութեանը Սիմէոն վարդապետն էր, եւ միւս նորա ձեռնադրեալք՝ Յակոբոս վարդապետը տիգրանակերտցի եւ Կարապետ վարդապետը մարաշցի, եւ այս վերջինը 1862 թուոյն Ջէյթունի պատերազմին ժամանակը Մարաշու առաջնորդ էր եւ անիրաւութեան դէմ բողոքեց ու ստորագրութիւն ալ չիդրաւ զէթունցոց իրաւանց դէմ, որն որ տաճկաց քննիչ ժողովը կուզէր զզէթունցիս ապօրինապէս յանձնանց տէր դատել եւ յետոյ Երուսաղէմ երթալով Աւագ լուսարարապետ կացուցին գնոյն Կարապետ վարդապետն եւ ապա եպիսկոպոս. ծանօթութիւնը ձեռագրիցն է:

72 Գեմ. Վ. Մարաթովի զօրաբանակը Գանձակ է մտել 1826 թ. սեպտեմբերի 4-ին (տե՛ս ԱԿԱԿ, տ. VI, ց. 374, *Присоединение Восточной Армении к России. Сборник документов, т. 2, Ереван, 1978, с. 204*):

73 Պարսկական 60000-անոց բանակը դէպի «բարեբեր կողմանս վերին հայոց» «գրօսանքի» առաջնորդ էր իրանի շահը՝ Ֆաթալիին էր, այլ որդողը ոչ թէ իրանի շահը՝ Ֆաթալիին Արքաւ-Միրզա աւագ որդի թագաւորուած Արքաւ-Միրզա

ան: Իսկ Օսմանոյի ճակատամարտում պարսկական զօրքերը գլխաւորում էին Արքաւ-Միրզայի որդին՝ Մուհամմադ-Միրզան, եւ քեռին՝ Ամիր խան սարդարը:

74 Պարսկական բանակը ուսական սահմանները անցել է 1826 թ. յուլիսի 15-ին:

Հա՛հ առնելով ընդ նուազութեան զօրուն յիացեալ: Սուրճանդակա առաքէր վաղվադակի, ասացէ՛ք անմիտ Հայազգոյն այնմիկ, առանց սուր ի վեր ամբառնալ՝ լիցի ինձ անձնատուր յիմարն, եւ պատիւ մեծարանց վայելեցէ յինէն ի կեանս իւրում. զի ես ինայեմ ի քաջանուն անձն իւր, որ սակաւք ի դէմս իմ եկեալ եւ իբրեւ զքարի Հարեալ այնպէս սատակեցի ի մէջ անխնայ իւրօքն Հանդերձ: Ապա թէ ոչ կենդանի եմ եւ կենդանի է անձն իմ ոչ գիտցէ փախուստ յերեսաց իմոց եւ սուր կերեցէ մարմին նորա:

Իսկ անուանին ի քաջս զի՛նչ առ այս. երթայք պատմեցէ՛ք շա՛հին այսպէս. վատութիւն ընդ քաջութեան խառնել շողմարար ազգացն է անօրինաց, բայց ինձ շահատակելն ի Հանդէս պատերազմի եւ մեռանելն արովթեամբ պարծանք է մեծապէս քան զոր շահն շողակրատէ ստախօս. այսու ամենայնիւ յուսացեալ եմ ի տէր, որ ապրեցոյց եւ ապրեցուցանէ զիս ի սրոյ չարէ եւ ես ոչ արարից ըստ կամաց ըստ շահին յաւիտեան:

Իսկ յորժամ յետս դարձեալ սուրճանդակքն բերէին զհամարձակախօս լուր բանիցն զօրապետին, զայրանայր յոյժ՝ եւ ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ դիւախորոխտ մոլորութեամբ խիզախումն առնէր խուժան բազմութեան, որք զճիչ եւ զաղաղակ ամբարձեալ՝ ըստ անբարի բարուցն իւրեանց բքոյ օրինակաւ շփոթէին. եւ մառախլապատ ստուերաւ զաչս սրտից իւրեանց խցեալ՝ առ Հասարակ դիմէին ի վերա ոռուսաց՝ /18ա/ իբրեւ գայլք ի գառինս յարձակեալք: Այլ դու մտադրութեամբ տե՛ս զարիական մրցումն քրիստոսազօր իշխանին ընդդէմ գիշատեալ այլազգացն: Կատարէր կամա՛ւ եւ զայն յօգուտ անձին, զմարգարեութիւն մոլլային. զերեսս դաշտին ստուերած ծխովն թատանօթի՝ իբրեւ շամանդաղաւ գիշերոյ մողացուցանէր, սակայն ի թնտանօթացն ոչ ոռւմբք երկաթեայք, այլ կապերտք ցնցոտիք լոկ արձակէին: Եւ յայնմանէ տայր պարսից՝ եւս քան զեւս ի կարծիս իւրեանց Հաստատել, թէ Հաջողեցաւ բան մոգպե-

տին, զոր տեսեալ շա՛հին՝ յառաջ մղէր՝ տալնսպաւ մեծաւ խաղացուցանէր զզօրս իբր սմպակակոխ իմն եւ կամ ոտնահար զնոսա առնել: Իսկ կորովին Հայազգի, որ յետ կոյս չորեք Հարիւրոցն՝ պնտակազմ զնոսա առնէր ահարկու ձայնին եւ սրտաշարժ բանին: Եւ մինչ թշնամին ի մեծի արշաւանս կրթէր ի վերայ սոցա, սա զիւրսն յետս յետս վարէր՝ զի թշնամին մերձեցի ի դէմս տարանակալ պատրաստութեան: Եւ միտ սորայ այս էին՝ զի զիւրսն ի ներքս ընկալեալ՝ թշնամեացն միայն դէմ եղեալ թնտակոծեցէ. սակայն ոչ ըստ կամաց յաջողեցաւ, վասն զի ընդ կրունկն դառնալ ի թիկանց երկեան եւ սակաւորքն ի յետս յետս ընթանալն կարի Համեցան, մինչ թշնամոյն ի վերայ Հասանիլ ցասմամբ: Անուհետեւ մտրակեալ զերիվարն անցանէր ինքն ի ներքս քան զեղեգն, ուր պահէին շարակարգութիւնք շղթայալի թնտանութեացն. եւ զի մի յայտնեցին տարանակալքն փութով ի գործ սնէր զհրացան մեքենայն:

Բա՛բէ սարսափելի դիպուածոյս՝ եւ անհնարին աղէտք կոտորածոցն, որ առաջիկայ իմ պատմել. սոսկումն ի սմին եւ սարսափումն պաշարեն զառն սիրտ: Չի թէպէ՞ր եւ զսակաւ Հաւատակիցան որբալ ոչ դադարիմ որք վասն Հայրենացն ողջակիզեալ, սակայն եւ վասն յոգնաթիւ օտարացեղոցն Հաւատով զիջանել ի գութ, ո՛չ տայ ինձ մոռանալ օրէնք բնութեանս, մանաւանդ տեսանելով զչարամահ դառն կորուստ նոցա յանմտութեան. եւ զվախճան նոցին վրէժխնդրութեան:

/18բ/ Բայց սակայն զոր առաջիկայ իմ անյապաղ պատմեցից զի մի՛ ամենայն որ յանձն իւր յուսացեալ՝ կարծիցէ ի գլուխ Հասուցանել զամբարշտութեան իւրոյ զվախճան, եւ յուսացեալքն ի տէր պարծեցցին, զի փրկութիւն Տեառն վերակացու է՛նոցա: Քանզի իբրեւ մերձ յեղեգունս Հասեալ զօրքն պարսից զչորեք Հարիւրովքն բազմաձեալ (Հաւաքեալ-Ա.Մ.) պոլորէին, մի՛ Հարկանէք զդոսա. շահն աղաղակէր մինչեւ Մատաթովն կենդանոյն ըմբռնեցէր, յորս կարծէր լինիլ: Գոչէր անդուստ

ապա արին Յովհաննէս (այն ինքն է զօրապետն), եւ չորեք Հարիւրքն ի սէր Հայրենեացն զոհեցին. շարժեցաւ երկիր ի ներքոյ ոտից յեղակարծումն ի ձայնէ ահեղագոչ թնտմանն, եւ օրն խռովեցաւ ի սոսկալի արձակմանէ թնտանօթացն: Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին եւ զշուարանս անբաւ տարակուսանաց՝ ի կողն թշնամեաց: Ա՛հ եւ բեկումն, մութ եւ խաւար առՀասարակ տարածանէր ի վերայ նոցա, առ ի սաստիկ թոթափմանէ Հրացան՝ մահառիթ երկաթոյն: Քանզի թնտանօթաձիգ շղթայքն ընդ որս եւ մասունք երկաթեղէնաց՝ իբրեւ զեղեգն զմարդիկ եւ զանասուն Հսճեն կիսակտուր շերտեալ՝ յերկիր կլորելով: Եւ ո՛վ էր, որ յոտս կալ կարացաւ առաջի այնպիսի փայլակնացայտ շողացեալ եւ աղխախեալ երկաթոյն: Վասն զի քաջք եւ վատասիրտք առ Հասարակ քանէին: Քանզի այր եւ ձի, մարդ եւ անասուն կիսամեռք եւ թաւալգոր դիակունք զմիմիամբք շփոթեալք՝ զմիմիանս բարախէին, դիակոյտ բազմութեան եւ վիրաւորք ոչ սակաւք՝ խոչ անկեալ ի ներքոյ ոտից՝ մօտ առ մօտ խտացեալ զկենդանիս գլորմամբ յերկիր կործանէին: Եւ այսպէս առ ի յոյժ թանձրանալ դիականցն կենդանիքն փախչել ոչ կարէին: Իսկ յետուստ ոմանք ճողոպրեալք զճանրութիւն զինուց յանձանց թոթափեալ՝ այսր անդր դարաբերեալ դեղեւէին. քանզի աչք իւրեանց /19ա/ մթազնել էին եւ սեւացեալ ի լոյս տըւրնջեան ի մեծ տալնսպէն. եւ ձայնք գալարափողոցն ոռուսաց՝ իբրեւ զմահու գութկան՝ յականջս նոցա մեծաբարբառ Հնչէին. յորմէ ամենայն որ զվախնուլն կեանք եւ քաջութիւն մեծ վարկանէր: Իսկ ապա իբրեւ առ սակաւ մի Հրացանութեան դադարէր՝ ի փարատիլ ծխոյ վառօտին եւ ի ցնդիլ յօղա՝ տեսարան սրտաշարժ տեսանիւր անդէն ի դաշտին Համբուրայ: Վասն զի ի սմա անդր եւս քան զբազմութիւն ազգաժողով կոտորածոյն Յովսափաթու՝⁷⁶ արեան Հեղեղք յերկիր ճապաղէին: Տա-

պաստ անկեալ դիքն անկենդան⁷⁷ իբրեւ զքարակոյտս դերբկաց զհող երկրին ծածկեալ երեւէին: Իսկ եթէ փախուցելոցն Հար ինչ լինէր՝ թեւս ի Հողմոց անձանց սեպհականէին, յերեսացն թագչիլ պատերազմեն: Բայց դու եկ եւ զսոցայն տես աղետալի թշուառութիւն: Քանզի Հեծելազօր Հրոսակք ոռուսաց՝ ընդ որս էին ոչ սակաւք եւ ի Հայոց ազգէն⁷⁸, գրեթէ իբրեւ զարծուիս ընդ օդս սլացեալ, այնպէս ի դասուց Հետեակացն իւրեանց զատուցեալք զկնի այլազգացն խոյանային՝ ի յաջողակ ընթացս քաջարշաւ երիվարաց. ուր եւ Հասանէին զհետ սոցա ի ճանապարհայն, տեկախոց սատակմամբ տապաստ յերկիր արկանէին: Եւ բազումք այն էին, որք ի սրոյ զերծեալք՝ ի մացառս սատակէին: Քանզի յետուստ կեսնաբարշ Հանդերձիցն իւրեանց քղանց կուռեալք ի փուշս եւ ի թուփս ի թշնամեացն կարծէին ըմբռնեալք, եւ յաճէն յերեսս ի վայր յերկիր անկանէին մեռեալ: Եւ այսպէս Տէր մատնեաց զնոսա ի ձեռս Հաւատացելոց իւրոց, որք կոտորեւ զհալածական թշնամիսն մինչեւ ի մեծ լով զհալածական թշնամիսն մինչեւ ի մեծ գեան Համբուր դիմէին, ուր սոսկալի կոտորած եւ ի ջրոյ անտի եղեալ տեսանէին. զի մարդիկք Հարիւրաւոր յերես անկեալ դնէին զեզերք գետոյն, ոռուցեալք իբրեւ զտիկ լրալիւր փքացեալք եւ կէսք պայթուցեալք: Քանզի ի ծարաւ տոթոյ եւ ի թշնամոյն իւրեանց Հալածելոյ ստիպեալ, այնպէս լինէր եւ մահ նոցա արբում ի ջրոյ գետոյն եւ ոչ իսկ պիտոյանալին բազմախողխող սրոյն ոռուսաց:

/19բ/ Յետ այսորիկ եւ քաջս Յովհաննէս այսպէս զթշնամիսն պարտեալ եւ յաղթանակեալ՝ ապա առնոյր զգիր ի վրայ մայրաքաղաքէն Տփխտոյ՝ ուր փոխաբբայն մատնէր ոռուսաց, թէ ահա ոչ յապաղ Հասա-

77 Ծամխորի ճակատամարտում պարսիկները կորցրել են անլիք քան 1000 զինուոր (տե՛ս AKAK, m. VI, ч. II, с. 373-374, Присоединение Восточной Армении к России, т. 2, с. 203):
78 Ռուսական բանակի կազմում գործում էին Գ. Մամուչարեանի, Ա. Բախարեանի եւ այլոց զխաւորած հայկական աշխարհագորային ջոկատները:

76 Հմմտ. Բ ՄՁ. Ի:

Իսկ արդ. ի բաց թողեալ զայժմեան յաջողակ իրողութիւնս եւ զխաղաղական կենակցութիւնս երկրին, յաւարտ տարեալ՝ կարգաւ զսկսեալն ի ծայր ածցուք պատմութեամբ: Քանզի յորժամ յօրինեցաւ մեծամուր քաղաքն, եւ բնակիչք ի նմա Հաստատեալ Հաւանութիւն ետուն օդոյն բարեխառնութեան եւ տեղոյն վայելչութեան. ապա ձեռն է արկ խանն ի շինութիւն այլոց եւ երկու մարտկոցաց, վեց ժամաւ Հեռի ի քաղաքն ընդ արեւելս եւ ընդ Հիւսիս, ուր վերոյ յիշեալ երկու գետքն ընդ այլ եւ երկուց գետոց եւ մեծամեծ աղբերց խոնեալ միախաղաց երազութեամբ անցանքն ընդ Հովիտս ընդ մեջ երկուց մեծամեծ ծայրամերձ լեռանցն Ասկարանու, անդ ի վերայ ստորոտից լեռանցն շինեցան մարտկոցքն ամրութեան, մինն յայս կոյս՝ եւ միան յայնկոյս գետոյն: Որպէս ի շինութեան քաղաքին, եւ առաւել ամրոցացս՝ եւսա բազմաց վտանգ մաւնու եւ Հիւանդութեան՝ ի ցրտոյ եւ ի սոթոյ:

Սակայն խանն առ ոչ ինչ Համարեալ զկորուստ մարդկան, զիւր Հաճութիւն կամաց անվրեպ կատարէր: Պստեր ամբացուցանէր զնորակերտ քաղաքն յամենայն կողմանց: Եւ զկնի աւարտելոյ ամենայն գործոց շինութեան, ժողովէր ամբարէր ի քաղաքն յամրոցսն եւ ի տեղիս տեղիս զցորեան եւ զապուր ի կերակուր՝ եւ զամենայն նիւթս պատերազմական՝ յօրինեալ պատրաստէր: Այլ ոչ ոք ի գաւառականացն ի ստոյգ կարծիս ըմբռնեցաւ զնմանէ, որոյ խորհուրդն յապստամբութիւն յակամիտեալ՝ ձգէր զնա յայսպիսի իրաց պատրաստութիւն, /27ա/ որում ոչ իսկ փոյթ էր, բայց միայն ի պատուաւոր բեկացն, որք գործակից էին խանին եւ խորհրդակից նորա: Սկսաւ ապա յետ այնու զօր ժողովել գունդ կազմել՝ եւ ի մարզս կրթութեան սակաւիկ ինչ վարժեալ՝ առաքէր ի քաղաքն եւ յամրոցսն. բաշխելով ամենեցուն առատապէս որում եւ ինչ պիտոյ լինէր. որում Հանդերձ զՀանդերձ ագուցանէր, որում զէս զզէս եւ որում այլ ինչ, ամենայն իւր զնոսա պատրաստ կացուցանէր իբրեւ եկեալ Հասեալ պատերազմի: Խոստանալով

ամենեցուն մեծամեծ պարգեւս եւ պատիւս. միայն թէ զոր ինչ ասասցէ ինքն, ըստ նմին եւ արարեալ կատարեսցեն զկամն նորա: Եւ զամենեսեան զինուորեալ բազմամեայ պատրաստութեամբ՝ վախճանեցաւ ի կենաց աստի աւանդելով զկատարումն կամաց իւրոց որդոյ իւրում Իբրաւիմ խանի: Քանզի ի ժամ մաւնու կոչեալ ասէս առ ինքն ուսուցանէր նմա զամենայն Հարս, թէ որպէս կարասցէ ապստամբեալ ընդվզիլ յիշխանութենէ շահին եւ Հատանել չտալ զամենայն արքունի Հասս գաւառին: Իսկ փոխանակ Փանէ՛՛ խանին նստուցին բեկքն Ղարապաղու զորդի նորին Իբրաւիմ խանն՝ գաւառապետ երկրին: Եւ էր սա յոյժ արիասիրտ եւ աներկիւղ մտօք: Յետ քանի ինչ աւուրց Հրովարտակ թագաւորին եկն եւսա նմա, զի փութով ժողովեսցէ զտարեկան Հարկս գաւառին՝ եւ վաղվաղակի առաքեսցէ յարքունիս, որ յոյժ պիտոյ է ի սակս պատերազմական Հանգամանաց: Իսկ նա ոչ ինչ պակուցումն աւհի ի սիրտ իւր կրեալ՝ Համարձակ պատասխանի առնէր վավերական Հրամանագրի շահին՝ ասելով. չունիմ ընկալեալ պատուէր ի Հօրէս, տալ ումէք ծառայաբար Հարկս. ոչ թագաւորութեանդ եւ ոչ այլ ում ումէք: Չայս բան ապարասանութեան լուեալ շահին՝ յոյժ խոր խոցեցաւ ի Հոգին եւ նեղեալ տագնապէր յանձն իւր, սակս այսպիսի պատասխանոյ նորա: Բայց առ ժամայն վնաս ինչ ոչ կարաց Հասուցանել զի մի՛ երկուստէք պառակտումն Հատանիցի ի տերութեան իւրում, /27բ/ եւ Հակառակորդ թշնամիքն յարուցեալ բազմացին, մինչ արքունի զօրքն յաղթութեամբ դարձցին ի պատերազմէն Խորասանու: Եւ յետ խաղաղացուցանելոյն զամբոխումն շփոթութեան խռովասէր բնակչացն Հերաթայ, քանի մի գունդ յարքունի զօրացն դարձեալ վերստին եկին յարքայանիստ քաղաքն ի Թեհրան՝ Հանդերձ իւրեանց առաջնորդօղ զօրապետօքն: Եւ նոյն ժամայն պատրաստեալ կազմեալ ետ զամենեսեան ի ձեռս Հասանդուլի Հազարապետին, որ երբեմն սենեկապետ էր արքային. եւ առաքեաց ստիպաւ ի քաղաքն Դաւրէ՛՛ առ

Սուլէյման շահգատէ որդին իւր, զի եւ նա ի գաւառացն Դաւրէ՛՛ ժողովեալ քանի մի գունդս այրուձի զօրաց՝ առեալ երթիցէ ի Ղարապաղ, առ ի զսպել զապստամբութիւն Իբրաւիմ խանին եւ զօրաց նորա: Եւ եթէ Հսար ինչ իցէ՛ կենդանոյն զնոյն զխանն ածցեն առ արքայ:

Ի Հասանել զօրուն առ Սուլէյման շահգատէն՝ զտեղի առնոյր եկելոցն աւուրս ինչ: Եւ առանց բանի պատերազմի պատրողական Հարաւորութեամբ կամեցեալ դաւ գործել եւ յորոգայթս մաւնու ըմբռնել զխանն, գրէ թուղթս առ նա ասելով. եղբայր սիրեցեալ՝ ի Հօրէ իմմէ ընտրեալ եւ կոչեցեալ պետ եւ գլուխ Ղարապաղու քաջազուն Իբրաւիմ խան. գիտեմ զի այդ գործ՝ ոչ է քո խորհեալ, այլ ապստամբ բեկացն քոց ուսուցեալ որք խանդացեալ ընդ պաշտօն մեծութեանդ. Հանել կամեցան զքեզ յաչաց մեծի շահին, վասն որոյ շարուզքեզ քոց մեծի շահին, վասն որոյ շարութեամբ ետուն քեզ գործել զիրդ զայդ, որ մերձակայ մաւնու է նշանակ: Եւ ինայելով ասեմ քեզ եղբայր: Որով իմաստութեամբ արարիր զայդ: Միթէ գաւառ զտերութեան միոյ դէմն ունել կարիցէ, կամ ծառայ տկար Տեառն Հօրի Համարձակիցի զայն գրել զոր դու գրեցիր: Եւ դու խան մի գլուղ զիմ րդ կարես ընդդէմ կալ Հօր թագաւորի միոյ: Ո՛չ գիտես, զի եթէ բարկանայ ի Համար բազմութիւնս զօրաց թափեսցէ ի վերայ գաւառիդ եւ ոտնակոխ կորուսցէ զէնս եւ զբնակիչս դորա ի դմին եւ դու գլխովին իսկ յանդերձանելի վտանգ մաւնու պաշարիցիս ըմբռնեալ: Այլ արի՛. անսա բանից իմոց եւ էջ ի մեծասիրտ Հպարտութենէդ, եւ փութա՛, է՛կ առ իս խոնարհութեամբ՝ եւ ես եղէջ ջատագով քեզ եւ Հաշտեցուցիչ Հօր իմոյ ընդ քեզ:

Իսկ խանն առեալ զայս գիր շահգատէին՝ առ ժամայն զդաւաճանող միտս նեաւ: Անդէն ի նմին Հուր բարկութեան բորբոքիւր ի սիրտ նորա, եւ Հրդեհ լուցեալ Հաշէր մաշէր զանդաստանս խորհրդակիր մտացն: Պատասխանի առնէր թղթոյ նոմոացն: Պատասխանի առնէր թղթոյ նոմոացն. Հանէր յանբարեհան գանձուց սրտին

զագրալի. եւ անգրելի բանս Հայհոյութեան, յօդէր, կցէր, շարէր եւ մրէր զսպիտակափայ երեսս քարտենին ամենայնիւ, զորս չեն բաւական տանել ամենայն ողջախոհ լսելիք մարդոյ: Այլ սակայն ասացից զորս ընտիրն է ի նոցանէ: «Աղուէտութեամբդ ասէ, պատրեա՛ զկանայս քո. մի թէ կարող ինչ իցես պատրողականաւ բանիւ տարագիր առնել զիս յամրութենէս, եւ վաղճան մաւնու ածել ի վերայ իմ ապառում եւ անգութ բարոքդ: Որպէս Հօրեղբօրն իմոյ ասէ. այդպիսի որսացեալ տարեալ ետուր բրել զպատուհանս երկոսին աչաց նորայ. եւ Հրամայեցիր առեալ տանել Արդաւել քաղաքն, որ դեռեա պաւհի յանլուամուտ գետնայատակ արգելանս նորայ: Որոյ վրէժն ի քէն կամ Հօրեղբօրն ըստ իմում կարի առից, որքան անիւ կենացս տակափն Հոլովման կայ յասպարեզի տարոյս: Թող թափեսցէ զզօրս իւր՝ եւ արասցէ որպէս ասացերդ: Յայտնի գիտացեալ լիցի քո, զի ես թուեալ եմ յառաջագոյն, զոր ինչ պիտոյ է վասն շինութեանս՝ յորս կամիմ ձեռս արկանել: Որ քակելոցն է եկեսցէ՛ յառաջ մատիցէ: Չայս եւ առաւել քան զսոյն մեծաբանէր նա ի գայթակղութիւն անձին եւ ժողովրդեանն: Թեպէտ յսկզբան առաջիկայ պատերազմին յաղթողք գտանիցին իւրքն՝ քան թէ յաղթեալք, սակայն /28ա/ ոչ ամենայն պատերազմ որպէս սկսանի այնպէս եւ կատարի: Իսկ ապա տեսեալ շահգատէին, թէ ոչ ինչ օգուցեալ ի կարծեալ Հարիցն, այլ առաւել եւս զգաստութեան եղեւ առիթ ապստամբին, նեղեալ տագնապէր յանձն իւր անօրէնս եւ ի սաստիկ տրտմութենէ սրտին թանձրամած գողորշի ծխախառ շնչէր ընդ բերան եւ ընդ ունգունս նորա իբրեւ զծովս Հնոցի: Ժողով գումարէր, գունդ պատրաստէր Ատրպատական աշխարհէն ի Հեծելոց եւ ի Հետեալ կաց բազմաց, զի առեալ ընդ արքունականս յարձակեսցի ի վերայ Ղարապաղու: Իսկ խանն եւս քան զեա ամրանայր շուրջանակի թաքստեայ զօրօք եւ դարանակալ Հէնիւք: Չամենեսեան քաջալերէր, ամենեցուն պարգեւս առաջի առնէր արդեամբ եւ բանիւք միայն թէ ասէր. յաղթեսցուք քա-

ցա ի քաղաքն Հասեալ՝ փութով ազդումն առեալ խանին. առաջի նոցա զորոնս քաղաքին քարամբք պարսպէր: Եւ փախուցելոցն ճիչ եւ զաղաղակ բարձեալ ի Հեռաստանէ՝ մեծակական ձայնիւ կոչէին, ողորմեցարու՛ք, ողորմեցարու՛ք. մի այդպէս, եւ մեզ ի ներքս առեալ ապրեցուցէր ի ձեռաց թշնամեաց աստի: Իսկ խանն ամենեւին ոչ կամեր լել զողորմեցեացն զձայն, այլ ստիպէր գործավարացն ճեպով լրացուցանել զպարսպէն: Չի ասէր, չեն արժանի նոքա կենաց, այլ կորնչելոյ. զի ասացի առ սակաւ մի Համբերեցէ՛ք՝ մինչեւ զուրն Հաւատարիմ՝ ասացուք ուստեք է: Բայց դոքա Հաւանեցուցին զիս ակամայ յիւրեանց կամս: Եւ նոցա եկեալ Հասեալ գտանէին զդուռն քարեալ: Անուհետեւ էր տեսանել զաշխարհումն զլալումն եւ զողբս անթարգմանելի ներքոյ, եւ շտապ տարակուսանաց արտաբոյ: Ամենայն տեսողացն երկամոնք դողային. եւ ոչ գոյր աչք, որ ի ժամոն ոչ թորէր ընդ երեսս զգերարտոսն, իբրեւ յաղբերականց: Քանզի որդիք զՀարս եւ մարք զորդիս եւ ազգականք զազգականս առ տուրս տեսեալ զի քեալ եւ տարակուսեալ էին յերկիւղէ մերձագայ մաւնոն, զանմխիթար կոծ զանձամբ արկանելին եւ նոքա մանաւանդ յորժամ զծանօթ ձայնն յիրերաց լուեալ /31ա/ սոքա ի պարսպէն, զանձինս ընկենուլ ի պարսպէն արտաքս կամէին, իսկ նոքա աղէկոտոր լեալ առ ի դուրս Հաշէին:

Եւ իբրեւ ոչ ինչ օգտեցան ի բազում իւրեանց թախձագին պաղատանացն, ուչ ի կուրծ առեալ զփախչիլն անտի նպաստ յօրինէին ի փրկութիւն անձանց: Քանզի տակաւ առ տակաւ մերձենայր ի նոսա թշնամին: Իսկ եւ նոքա միաւհողոյն դիմեալ երթային յարաւակողմն քաղաքին ի ձորն Երկաթալի կոչեցեալ. եւ անտի ելեալ ի բլուր մի մեծ, ընդ գլխով որոյ ձգեալ ընդերկարէր պարիսպն քաղաքին:

Անտի ազգականք նոցա եւ բարեկամք ի վերուստ ընդ պատուար պարսպին կախեալ խարազան չուանս մի մի ի նոցանէ ի վեր Հանեալ քարշէին: Իսկ կոչակք Հրացանիցն առատախիտ թոթափեալ Հոսէին

զինի նոցա. եւ ոչ սակաւք ի նոցանէ այսու օրինակ առ ի վեր ժամանեալ Հասին, ոմանք վիրաւորեալք եւ կէսք ապրեալք: Իսկ այլքն մնացեալք ի քարշէն՝ կոչակաւար եղեալ թոթափեցան ի պարանացն առ ոտամբ պարսպին զինի միմիանց, իբրեւ թէ ի ծառոց զպտուղս թօթափելով: Ի դէպ ինձ թուի աստանօր յիշել վասն երկուց արիական քաջացն Հայոց՝ որք յաղորիս երթային յայնժամ: Չի մինչեւ նոցա Հասանել յեզր գետոյն, երեւեցաւ յայտնեցաւ չարաւնար խարդաւանութիւն զօրացն պարսից, որք իբրեւ տեսեալ թէ թշնամիքն ի վերայ արձակեալ մերձենային ինքեանց, խոյս անտի ետոն, եւ ի ճանապարհէն խոտորեալ յանտառախիտս ընդ Հովանեալ ծառոց զանձինս գաղէին յորսորդաց չարաց: Ունելով ընդ ինքեանս իւրաքանչիւր զինուցն պատրաստութիւն եւ Հրացանս անմողար (անվրէպ-Ա.Մ.): Իսկ յետ սակաւ ինչ առնուլ Հոգոյ՝ ելեալ ընթանային զառ ի վեր՝ դէպ ի վերին դուռն քաղաքին: Եւ յորժամ փոքր մի Հեռանային յանտառէն՝ աւա ընդառաջ լինէին նոցա ընտանի թշնամիքն, ի թուրքացն գավառին՝ մոլլայ մի չարակրօն եւ զինուորք ընդ նմա այլազգիք: Շարժեալ զեղեգնաբուն տէկ նիզակին մոլլան, որ ի ձեռին իւրում, ասէր իւրոցն. Հարէ՛ք զերկոսին Հակառակորդակրօնից մերոց՝ եւ մերկացուցէ՛ք, զոր ունին յընչից իւրեանց: Չայս լուեալ արանցն երկուց /31բ/ զմաւ յանձն առնուին՝ միայն թէ զանօրէն մօլլան սատակեցէն: Եւ մինն ի նոցանէ ի գործ զանօթն Հրացան առեալ տատարկէր ի սիրտ չար մօլլային զուրն բարկութեան եւ ընկեցեալ յերկարէն յերկիր կործանէր չարաչար եւ զհետագայս նորին ի ծուխ վառօտին թողեալ: Եւ առ զընկերն եւ յոտս երազագնացս իբրեւ թէ թեւաւորեալ թուրեցեալ Աստուածային իմն պաւլականութեամբ ազատեցան ի ձեռաց արինաւհեղացն՝ զերծեալք ի լեառն, որ ի վեր է քան զտեղին: Իսկ իբրեւ տեսեալ եղեւ աճապարեալ փախուստ նոցա ի շուրջանակի սփռեալ Հինիցն պարսից մերձեցաւ միոյն ի նոցանէ մաւն ողորմելի վաղճանաւ: Քանզի մինչեւ ելեալ էին յապաւնով

կողմն բարձրութեան լերինն, յեղակարծ ցայթմամբ ի վեր՝ մինն ըմբռնեալ կախեցաւ ձեռօք յոստոյ ծառոյն իրիք՝ եւ ասէ ցմիւս ընկերն՝ փախի՛ր եղբայր. փախի՛ր. գուցէ դո՛ւ ապրեցուցանիցես զանձս քո: Ասէ ցնա՝ մի՛ թե դու ոչ ապրեցուցես զքեզ: Իսկ նա ասէ՝ իմ սաւման կենաց ցայս վայր է առ զկատարումն լրման: Քանզի կոչ ոտից առն խորտակեցաւ յըմբոյ թշնամեացն: Իսկ առողջս անդամօք ասէր եւ ինձ լաւ է ընդ քեզ մեռանիլ քան թողուլ զքեզ ի ձեռս անօրէն թշնամեաց. եւ դառնայր զի առեալ զընկերն զթիկամբ փախիցէ յզինի եկելոց գազանաբարոյիցն: Իսկ վիրաւորեալն ձայն բարձեալ սաստեր ասելով զի՛ դառնաս խելաբարեալ փախի՛ր. զի ես աւա անկանելոց եմ ի ձեռս անօրինացն եւ դու յորժամ զիս օգնել ինչ ոչ կարես, գոնեա՛ զքեզ մի ընդիս կորուսանէր: Չայս եւ առաւել քան զսոյն ասելով յորդորէր զընկերն մի տարադէպ անձամատն լինիլ ոչ բարոք մարտիկան ի յողորմական բանից վիրաւորելոյն յորդորեալ ակամայ զփախո՛ւստն ընտրէր. դիմէր, երագէր, ընթանայր զառ ի

վեր լերինն՝ եւ անդուստ ի վե՛մ ինչ բարձր ելեալ /32ա/ յետկոյս դարձեալ նայէր ի խոնարհ թէ զի՛նչ լինիցի ընդ ընկերն իւրում: Եւ աւա տեսանէր մարդախոզող գազանաբարոյքն յիննաչափ զինուորքն պարսից զմիմիամբք ելեալ՝ սուսերամերկ բարկութեամբ միմիանց ո՛չ տային թոյլ Հատանել զառն զգլուխ, քանզի ոմն ասէր ես Հատից, այլն թէ ես եւ ամենեքեան զՀատանելն կամէին եւ ոչ կարէին, զի խիտ առ խիտ մերձակայութեամբ զվիրաւորեալն ի մէջ փակեալ ոչ կարէին զզէնս շարժել եւ զգլուխ առն ի բաց Հատանել բառնալ: Չայս տեսարան ցաւալի եւ սրտաշարժ տեսեալ փախուցեալ ընկերին՝ ոչ այն էր, որ լայր եւ ոչ այն զի Հաստատեալ զոտս յառաջ տանէր զանձին զփախչիլն, զի թոթափեցաւ յուժոյ ի սաստիկ երկիւղէն: Եւ ապա առ սակաւ սակաւ յինքն եկեալ քաջ քաջ փախչէր եւ Հասեալ ի վերին դուռն քաղաքին, ուստի քարշեալ եղեւ ի վեր ի ներքս ի վերուստ ձգեալ պարանաւ: Բազմութիւն կանանց կուտեցան ի վերայ առն՝ ոմն զորդոյ իւրոյ Հարցանէր՝ ոմն զառնէ իւրմէ, միան զՀօրէ կամ զեղբօրէ եւն...*

* Տե՛ս երես 10, շարունակութիւն կրկին Ասխազիծ օրինակն գործոյս, այս Աջանն եւ լից զպակասութիւն պատմութեանս, որ անդ կայ - ծանօթութիւնը հեղինակին: